



## Իրաքում արտակարգ դրություն հաստատվեց

Նախագահական հրամանագրով երկ, ուրբաթ, արտակարգ դրություն հաստատվեց Իրաքում, որպես հետևանք երկրի հարավ և հյուսիս-արևելքում ծավալված մի կողմից շիա, մյուս կողմից քուրդ ապստամբությունների ճնշման գործողությունների: Հրամանագրի ընթացում մից հետո իրաքյան ռազմապետը հաստատեց իրաքյան ժողովրդին, «զգույն մնալու և իշխանության շուրջ համախմբվելու», քանի որ, ըստ նրա, «երկիրն այս օրերին դիմակայում է ներքին թե արտաքին դժվար շատ ուժերի»:

տանգից: Արդարև, ըստ իրանյան արքայազմի, վերոհիշյալ շրջանում վերջին բախումների ընթացքում զոհվածների քիվը անցնում է 15 հազարից:

Միջազգային դիտորդների կարծիքով, իրաքյան քանակը ձգտում է նախ զսպել հարավ-արևելքի շիաների ապստամբությունը, օգտագործելով ռազմական ուղղաթիռների կրակը, ապա միայն վճռական գործողություններ ձեռնարկել երկրի հյուսիս-արևելքում գտնվող քրդաբնակ շրջանների ուղղությամբ:

Քրդական արքայազմից հայտարարված երկկողմանի տվյալներով, բուսն կողմերը շարունակում են Մուսլիմանիա և Մուսուլ քաղաքներում, ինչպես նաև Քուրդական քաղաքի մոտակայքում, որտեղ իրաքյան օդուժի ռազմական զորքերը կրակում են պայթյունային և դեռ հրդեհվում է մի անձ նավթահոր:

## Օգալ-Բուշ բանակցություններ Բենդ Դեյվիդում

Երեկ երեկոյան Վաշինգտոն և այնտեղից Բենդ Դեյվիդի պրեզիդենտական հանգստավայր ժամանեց Թուրքիոյի նախագահ Թուրգուտ Օզալը, ամբողջ շաբաթավերջին բանակցություններ վարելու համար նախագահ Չորջ Բուշի հետ:

Անկարայից թռիչք անելուց առաջ Օզալը մամուլի ներկայացուցիչներին հայտարարեց, թե իր այցի նպատակն է ամերիկյան պաշտոնակցի հետ խորհրդակցել Պարսից ծոցի տագնապից հետո տեսնված իրավիճակի շուրջը, նպատակ ունենալով շրջանում հաստատել «տեսական խաղաղություն»:



Սակայն, միջազգային դիտորդների կարծիքով, նախագահ Օզալի այցի հիմնական նպատակն է մեծ ծավալի նյութական օգնություն պահանջել ԱՄՆ-ից, նկատի ունենալով, որ Թուրքիան Մոցի տագնապի ընթացքում «հանձն է առել տնտեսական մեծ զոհողություններ», որոնց հատուցման համար իր ստանալիք 250 միլիոն դոլարի գումարը գտնում է խիստ անբավարար: Մանավանդ, որ շարունակում են դիտորդները, Օզալը իր հետ տանում է մի մեծ քրդաժողովը: ՆԱՏՕ-ի թուրքական գործերի արդիականացման ծրագիրը, որը պատրաստ էր վաղուց:

Այնպես Վաշինգտոն է, որ Օզալ-Բուշ հանդիպման ընթացքում կարծարծվի նաև Կիպրոսի հարցը:

Մյուս կողմից, ըստ արևմտյան արքայազմի, որոնք վկայակոչում են Իրաքից փախած գաղթականների և դասալիք զինվորների, իրաքյան բանակին հաջողվել է գրեթե ամբողջությամբ ճնշել երկրի հարավ-արևելքում քարձրացած ապստամբությունը: Քի. Քի. Մի. ռազմական աշխատակիցը, որին հաջողվել էր մտնելու միջուկ սահմանամերձ Մաֆուան քաղաքը, երեկ հաղորդեց, որ ամենաարդյունավետ կողմերը տեղի են ունեցել Բասրայում, որտեղ հակառակ դեմքեր շարունակվող ընդհատ բախումներին, քանակը տիրել է կացույթային: Փախստականները նկարագրել են այդ քաղաքի փողոցներում պարզված քամուկի տեսարանները:

Մայթերի երկայնքին իրար վրա դարձված են 5-6 դիակներ, որոնք նեխում են արդեն, սակայն ոչ ոք մտ չի գալիս դրանց, վախճնալով քացահայտվելու վերջին օրերը:

### ՄԱԿ-Ի ԱՆՎՏԱՆԱԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՊԱՅՄԱՆԸ

ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի մեջտական առում 5 երկրների ժողովը երեկ վավերացրեց մի նախագիծ, որով հայտնվում է Բաղդադին, որ տնտեսական շրջափակումը այդ երկրի դեմ կշարունակվի այնքան ժամանակ, քանի Իրաք չի ոչնչացրել իր տրամադրության տակ գրեթե լուրջ զանգվածային ոչնչացման զենքերը ու զինամթերքը, մասնավորապես քիմիական ու բակտերիոլոգիական ռուսերը:

### ԿԱՐՁ ԼՈՒԲԵՐ

ՌԻԱԿ.- Իրաքյան Թագրիթ քաղաքի վերնուստի ամերիկյան հրթիռները երեկ շախախնցին ռազմական մի ինքնաթիռ, որը հարվածներ էր հասցնում ապստամբ ուժերին:

Երեք օրվա ընթացքում սա երկրորդ իրաքյան ինքնաթիռն է, որ վայր է ընկնում ամերիկյան ուժերի կողմից:

### ՎԱՇԻՆԳՏՈՆ

Նախագահ Զ. Բուշը երեկ պահանջեց դատական հետապնդում կատարել Լուս Աճեյնիսի ռազմականության դեմ, գտնելու համար այն սպիտակամորթ ռասիստներին, որոնք վերջերս խուսափել էին մի սևամորթ վարորդի: Նախագահը մի սիրող լուսակարգի գաղտնի տեսաժամանակները դիտելուց հետո, «քառամեկի» էր հայտարարել ամերիկյան էկրանների վրա ցուցադրված այդ տեսարանը:

### Յանրաքվե

## Զեղծարարություններ Մոլդովայում

Մոսկվայում, Մոլդովայի հանրապետության մշտական ներկայացուցչությունում տեղի ունեցավ մամուլի ասուլիս, որին ներկա էին հանրապետության Գերագույն խորհրդի նախագահի տեղակալ Խաղիկոն և փոխվարչապետ Օրոտուկը: Նրանք ներկայացրեցին համաժողովրդական հանրաքվեի նախորդին և դրանից հետո Մոլդովայում տեղի ունեցած դեպքերը: Մարտի 13-ին հանրապետության 15 շրջաններում են մի քանի գյուղական շրջաններում տեղակայվեցին կարմիր քանակի զորաշուկաներ, գրանտատակային միավորումներ: Չորրորդ մուտքը հանրապետությունում լարվածության նոր ակտի առաջացրեց: Մոլդովայի Գերագույն խորհրդի ղեկավարը հետո, մարտի 16-ին պրեզիդենտ Գորբաչովը հրաման տվեց մագովին գործերը հանել Մոլդովայից:

Մարտի 17-ին զինտեղամասերում սկսվեց հանրաքվե: Ընտրողների շատերը ոչ միայն մի քանի տեղամասերում են մասնակցել, այլև միանգամից թվարկել են երկու, երեք, անգամ չորս անձի փոխարին: Նույն օրը զինվորականները ծեծել են կենտրոնական հեռուստատեսության Մոլդովայի սեփական թղթակիցներ Սոկոլովային և Միշչենկոյին: Հարձակումներ են եղել նաև քաղաքացիական ընկալության վրա:

Հանրաքվեի հետ կապված բոլոր փաստերը ներկայացվել են կենտրոնական ընտրական հանձնաժողովին, սակայն վերջինս հրաժարվել է ընդունել այդ փաստաթղթերը:

### Գորբաչովը հաղթեց իր տեղամասում

Մոսկվայի Հոկտեմբերյան շրջափակի պատգամավոր Ա. Կուրյակովը հայտարարել է, որ այն տեղամասում, որտեղ թվարկել է Մ. Գորբաչովը և տիկին Գորբաչովան, հանրաքվե վերջացել է պրեզիդենտի հաղթանակով: Միության կողմ են թվարկել 376, դեմ՝ 375 հոգի: Անհայտ է միայն, թե «այդ մեկը» պրեզիդենտն է, թե իր տիկինը:

### «Չախերի» միջազգային հավաք

Կրոնադատական ապստամբության 70-ամյակին էր նվիրված մարտի 16-18 Մոսկվայում անցկացվող միջազգային կոնֆերանսը: Այն կազմակերպել էր անառիկ-սիդեյկալիստների համադաշնակցությունը:

Հավաքի մասնակիցները քննարկեցին ժամանակակից քանկոնական շարժումների հիմնահարցերը: Ընդունվեցին երկու քանաձեռն՝ գործադուլավոր հանրապետությունների շախկոնության և միջազգային ծախս շարժման զարգացման հետապնդողների վերաբերյալ:

ՄՄՍԿՎԱ, մարտ 22  
Սեփական թղթակցի չԱՎՈՐ ԱՍՏՆԱԿԱՆ և լրատվական գործակալություններ

## ԱՍՆ ԴԵՄՊԱՆ ՋՈՆ ՄԵԹԼՈԿ Կրակչենկոյի հեռուստաադիոընկերությունը իրական փաստերը ներկայացնում է աղավաղված

Հինգշաբթի օրը ԱՄՆ-ի դեսպան Ջոն Մեթլոկի առանձնատանը կայացած քրիֆինգի ժամանակ նա հավաքածների ուղարկությունը հրավիրեց «Վրեմյա» հեռուստաադիոյի կիրակնօրյա թողարկման ժամանակ Դեմոսի Բիրյուկովի կողմից արված մեկնաբանության վրա: Ինչպես հայտնի է, մեկնաբանության հեղինակը մեղադրեց ամերիկյան արհմիութենական կազմակերպությանը (որը հայտարարել էր գործադուլավոր խորհրդային հանրապետության հետ իր համաբաշխության և ներքին ֆինանսական օգնություն տրամադրելու մասին) «Խորհրդային» Միության ներքին գործերին միջամտելու մեջ:

Չ. Մեթլոկը այդ մեկնաբանությունը որակեց որպես ոչ միայն հետադիմական, այլ նաև պետական շրջանակների կարծիք արտահայտող:

Ըստ նրա ոչ մի գործադուլի քան չկա, որ ամերիկյան քանկոնները օգնում են իրենց խորհրդային ընկերներին, քանի որ նույնիսկ ԽՄԿԿ ԿԿ օրգան «Պրավդա»-ի տիտղոսաթերթին է տեղադրված «Պրոլետարներ քուրդ երկրների, միացե՛ք» կարգախոսը: Հարավում է արդյոք, որ «Վրեմյա» ծրագրի հաղորդավարը պարզապես չի ընթերցում «Պրավդա»-ն:

Դեսպանի համար նաև անհասկանալի էր, թե ինչու «Վրեմյա» ծրագրի համար տարօրինակ թվաց այն, երբ մի քանի խորհրդային հանրապետություններ հրավիրվեցին ԱՄՆ: Չէ՞ որ ամերիկացիները հրավիրում են և խորհրդային գրողներին, և դերասաններին, և բժիշկներին, և, ի դեպ, Համաժողովրդական հեռուստաադիոընկերության աշխատակիցներին:

Որակելով «Վրեմյա» ծրագրի ելույթը Չ. Մեթլոկն ասաց, թե դա ոչ թե միայն մեկ լրագրողի մեկնաբանություն է, այլ այստեղ զգացվում է հեռուստաադիոընկերության վարած քաղաքականությունը, իրական փաստերը աղավաղված ձևով ներկայացնելու նրա ձգտումը:

### Հանրափոքները շարունակում են գործադուլը

Արդեն մեկ շաբաթից ավելի է, ինչ Մոսկվայի Մանեժնայա հրապարակի կենտրոնում, Ռուսաստանի ազգային դրոշմերը վեր պարզած՝ երկրի տարբեր շրջաններից եկած հանրապետությունների ներկայացուցիչները կոչ են անում օգնել և աջակցել գործադուլավորներին: Արդեն միության 155 հանրեր միացել են այդ ընդհանուր միջոցառմանը: Ռուսաստանի անկախ արհմիությունների տանը կայացած մամուլի ասուլիսում, որը վարում էր Սերգեյ Գրիգորյանը, բոլոր ելույթ ունեցողները կոչ արեցին դրամական աջակցություն ցույց տալ հանրապետություններին: Հրապարակեցին գործադուլավորների պահանջները: Դրանք հիմնականում վերաբերում են ԽՍՀՄ պրեզիդենտի և Գերագույն խորհրդի հրաժարականին, աշխատավարձի քարձրացմանը, սոցիալական պայմանների ապահովմանը:

Այժմ, Մոսկվայում գտնվող 7 հանրապետություն՝ Բ. Երոֆեևը, Վ. Կուրյանը, Վ. Լյուբիմկինը, Վ. Բելովը, Ս. Ցանինը, Ա. Մալիխինը և Բ. Գեյնանկոն պայքարում են իրենց իրավունքների և ներկայացրած պահանջների համար: Կհաղթե՞ն Կրեմլին հանրապետությունները, դժվար է գուշակել: Բայց նրանք լի են վճռականությամբ:

ԽՍՀՄ Գերագույն խորհուրդը հանրապետությունների գործադուլների վերաբերյալ ընդունել է որոշում, ուր կարուկ կերպով մերժվում է սրանց պահանջները: Միութենական խորհրդարանը գտնում է, թե այդպիսի մտնեցումը կարող է իսկապես աղետալի լինել ողջ երկրի համար:

Ճառագող «ԱԶԳ»-ի ճամար

ԼՈՒՐԵՐ ԼՈՒՐԵՐ ԼՈՒՐԵՐ ԼՈՒՐԵՐ ԼՈՒՐԵՐ ԼՈՒՐԵՐ ԼՈՒՐԵՐ ԼՈՒՐԵՐ ԼՈՒՐԵՐ ԼՈՒՐԵՐ

ԿԼԱՌԻՍ ԲԼԵՆ.

Հոնոնեկերի խնդրի իրավական կողմը շատ է հուզում գերմանացիներին

Օրերս Հայաստանում էր գտնվում Խ. Միտրոյունցու Գերմանիայի արտակարգ և լիազոր դեսպան Կլաուս Բլենը: Նա երևան էր ժամանել պրոքսեկտորման և դրա անձնակազմի պատրաստման կենտրոնի հիմնադրի տեղադրման հանդիսավոր արարողությանը մասնակցելու համար:



Դեսպանը հանդիպեց Հայոց Խորհրդարանի նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի, Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա-ի և վարչապետ Վազգեն Մանուկյան հետ: Հանդիպումից անմիջապես հետո, կարճատև մամուլի ասուլիսում մեր աշխատակից Գորգեն Խաժակյանը նրկու հարցով դիմեց դեսպանին:



ՊԱՏԱՍԻԱՆ. Ես չեմ կարող որեւէ բան ասել ձեր տնտեսության մանրամասների մասին՝ դրանց ծանոթանալու համար շատ ժամանակ կպահանջվի:

Սակայն ձեր նախագահի և վարչապետի հետ հանդիպումներից մեծ տպավորություն ստացա: Հատկապես գրավում է, թե ինչպես եք դուք պատրաստվում դուրս գալ լճացումից, տնտեսական ճգնաժամից, հիմնականում հողային քարեփոխումների և նաև փոքր ձեռնարկությունների, խանութների մասնավորեցման եղանակով:

Հրաշալի է ձեր կառավարության այն միտքը, թե շուկայական հարաբերությունները պետք է սկսվեն ներքեից: Իսկ դրանց հիմքը՝ ազատ համագործակցությունն է: Կարծում եմ, որ դա անպայման կլինի:

Հ. Մի քանի խոսք ԳԳՀ-ի նախկին ղեկավար Էրիկ Հոնոնեկերի դեմ հարուցված գործի մասին, որը մեղադրվում է իր ծառայողական դիրքը շարաշահելու մեջ: Հայտնի է, որ նա հիմա գտնվում է ԽՍՀՄ-ում:

Պ. Խորհրդային Միությունը մի քանի պատճառաբանում է տվել Էրիկ Հոնոնեկերի ԽՍՀՄ գալու վերաբերյալ: Դրանք մարդասիրական քննչի պատճառներ են: Բայց այդ հարցն ունի նաև շատ լուրջ իրավական կողմ, ինչը շատ է հուզում մեր ազգայնականներին: Գերմանիայի կառավարությունը այդ մասին տեղյակ է պահել խորհրդային կողմին: Ը

ՀԱՐԾ. Դուք ծառայել եք նախկին ԳԳՀ-ի տնտեսությունը և արդեն մոտիկից գիտեք, թե ի՞նչ է «սոցիալիզմը»: Ի՞նչ կասեիք Հայաստանի տնտեսությունը վերականգնելու վերաբերյալ, հենվելով ձեր փորձի վրա:

ՍԱՐՏԻԿԻ ՕՐԱԳՐԻՑ

...Անցած երկու օրերը ծանր էին ու դժվար տղաների համար:

Արցախյան հեռավոր ու լքված այս գյուղում (Ա.) ապրում են զառանցալ մի քանի ծերունի՝ իրենց պառավ կանանց հետ: Աստծուց ու մարդկությունից մոռացված սրանք բարձր են տալիս կյանքը՝ ցուպանով աշխարհից բնաջանալու իրենց ժամին: Զավակները փափուկ կյանք են վայելում այլուր, շենացնելով օտար քաղաքներն ու գյուղերը: Սա մեր ազգի համար կարծես սովորական է դարձել:

Եթե աստված ու իրենց ծեր ծնողներին լքած զավակները մոռացել են Ա. գյուղը, հարևան քուրքերը միշտ են հիշում դա ու հաճախ իրենց «այցելություններով» պատվում:

Երկու օր ամառ եկել կրակել էին գյուղի վերելի լանջից, վերջնագիր ներկայացրել քնակիչներին՝ եռօրյա ժամկետում հեռանալ, հակառակ դեպքում՝ քուրքին կրկնադրեն: Եկել են ինչպես միշտ շատվորով, կրակել խաչածու, ավտոմատահրթեր թողել տների տանիքների վրա: Դե արի, խնդն ու թույլ հայ ռամիկ, քո դռաշուկայով (մի փողանի որսորդական հրացան) պաշտպանիր քո անձը, չեմ ասում կնոջը, տունդ, գյուղդ և հողերդ... Ու՛ր եք, զավակներ ու թոռներ, եկեք օգնեք, պաշտպանեք ձեր ծնողներին, էլ չեմ ասում տան ու գյուղի, ազգի պատվի մասին: Ազերիներն զգացել էին, որ գյուղին տեր չկա, մինչ այդ արդեն գյուղից առնանգել էին 42 խոշոր եղջերավոր անասուն, ու վերջնագիր են տվել:

Գյուղ հասանք մի ժամից: Մեր գլխով շատ փորձանք է անցել, սակայն նրք տեսնում են անզորությունից ու սարսափից մի բուռ դարձած զառանցյալներին, արցունքից թրջված ու խոշտանգման սպասող նրանց հայացքները՝ ցաղը ծամելով, ատամները իրար պինդ սեղմած, արյունդ եռալով քաշում են ավտոմատի ձգանք ու «ես ձեր տիրու պապը...»

Թուրքերի դիրքն ավելի ամուր էր, որովհետև գրավել էին բարձունքը: Գիրքավորվեցին ու անցանք հարձակման: Կես ժա-

մից պատկերը հակառակն էր, սարի վրա մեք էինք նստած ու իրենց գյուղի վրա ուղարկում պատասխան «բարևներ»:

Հետ քերտեցինք տարած անասունները: Վեռնեցինք «նստել» գյուղում մի ամիս:

Հիմա պառավ ենք, հոգնատանջ: Ա. գյուղը շատերի մեծ վեր է ածվել մերքերն ու մատակարարող գաղութի, ամբողջ տարին կաշիատեն, կոյիզն ու կուղարկեն «զավակներին», որ սրանք ներդրում չբաշեն: Մրանք գնում են երևան, այնտեղից էլ «մանրից» քոչում արտասահման՝ օտար, հարուստ երկրներ:



Իսկ մեր հողերը մնում են անտեր... Հողը նրանք է, ով այն մշակում է, ապրում ու պաշտպանում: Ով արյուն է թափում անն մի թիզի համար:

Երիտասարդները հեռանում են ծայրամասային սահմանամերձ գյուղերից, որոնք կզոյատեն 10-15 տարի, ոչ ավել: Ազատը, Կամոն, Կուշի-Արմավիրը վկա... Ի՞նչ անել... Բավական չէ՞ կուտակներ, որ օտարը ուտի: Երբեմն մտածում են, զուցե սա մեր ճակատագիրն է: Սակայն ո՛չ: Ձե՛ր որ ունեցել ենք Տիգրան Մեծ, Արշակունիներ, Կիլիկիա...

Պետք է ինքնաճանաչման գացք, հետո պաշարներ ու հաղթանակ: Պաշարի, անվերջ պաշարի մեջ է միայն մարտնչելու մեր ազգը, փայլելու ազգերի համաստեղության մեջ: Ը

ԾԱՆՌՈՅՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱԺԱՆՍՈՒՆՔ ԵՐԵՒԱՆՈՒՄ

Հայաստանի «Հանրապետական փոստային առաքումների կենտրոն»ում բացվել է մի նոր ծառայության բաժանմունք, որը վարչվում է ծանրոցների միջազգային փոստային առաքումներով:

Մարտի 16-ին այդ բաժանմունքի աշխատողների հետ մասնակցեցին ԱՄՆ-ից առաջված ծանրոցների հանձնմանը: Դրանք ընդամենը տասն էին, սակայն տասը առաջինները՝ Այս բաժանմունքը պայմանագիր է ստորագրել ամերիկյան «D & H Inter-Trade Company Inc.» ընկերության հետ, ըստ որի՝ ԱՄՆ-ից ցանկացած անձ կարող է ծանրոց ուղարկել Հայաստանի Հանրապետության ցանկացած քաղաքացու, և ընդամենը մի քանի օր անց ավելի ստույգ 5-6 օրից, այդ ծանրոցները կհանձնվեն հասցեատիրոջը:

Զարմանալի ու ուրախալիս այն է, որ ծանրոցները անպայման կհասնեն հասցեատիրոջը, և անշուշտ ամբողջականությամբ: Ծանրոցներում գտնվում է ուղարկված ապրանքների անգլերեն և ռուսերեն ցուցակը, որով կարող են հասցեատերերը համապատասխան թղթերը ստորագրել ուղարկվածը լիովին ըստուգելու և ստանալու հետո:

Ծանրոցները հասցեատերերի տուն հասնելը պարմանք առաջադրեց ստացողների մոտ, և բոլորն էլ նույն բացակաշուկայուն ունեցան:

«Ո՛րեք չի կարող - ախր...»

Այս նոր ծառայության շնորհիվ Հայաստանի Հանրապետությանը հատկապես մեծ յուրաքանչյուր կիրառմի համար մեկ ամերիկյան դոլար՝ Երևանի պարագային, իսկ շրջանների համար՝ 1,40 ամերիկյան դոլար:

Մարտի 16-ին, Արամ Խաչատրյան մեծ համերգային իրադարձություն էր: Առաջին անգամ այս պետական դահլիճը իր դաժնը բացեց երգվող բանաստեղծության կամ երգասացության ժանրի ներկայացուցիչների առջև: Վահրամ Թաթևյան և Լիլիթ Պիպոյան: Համերգին իր մասնակցությունը բերեց նաև Կոմիտասի անվան երաժշտանոցի սանուհի Անահիտ Մանասյանը, որն այս ժանրում իր առաջին քայլերն է անում: Համերգի ծրագիրը կազմված էր Պաղատար Գլխի, Սիմանթոյի և իր իսկ՝ Վահրամ Թաթևյանի բանաստեղծություններով գրված երգերից:

Ոչ շատ վաղուց էր՝ 1988-ի փետրվարին, երբ Վահրամի «Վարաբաղ» երգը այս շենքի դիմաց՝ Անկախության հրապարակում, և կամ կոմիտասի կենտրոնի առաջ հազարավոր մարդիկ էին երգում (այս տեսարանը կա «Վերադարձ դեպի Արարատ» ֆիլմում):

Ոչ շատ վաղուց էր՝ 1988-ի հունիսին, երբ այս շենքի աստիճաններից տեղավորված նստացույցը գլխահակ լսում էր Սուրբ-Պատմի մահատակներին նվիրված «Պատգամ» երգը:

Ու համերգի օրը մտավախություն կար, արդյոք հանդիսավոր մուտքից ի վերջո ներս ընդունվելով՝ շարժման հետևանք ու տարեգրություն այս երգերը չեն կորցնի իրենց անմիջականությունն ու հակասակաությունը, մուլտցրն ու թափը: Բայց նույն ուժգնությամբ էին հնչում ե՛լ «Շուշի», ե՛լ «Մեռնող քաղաք», ե՛լ «Կրկնվող պատմություն» երգերը՝ նոր ներկայացվող ամ-

Փետրվարյան օրերի երգերը Արամ Խաչատրյան համերգային մեծ դահլիճում

րող «Երևան 88» շարքը: Համերգի ընթացքում հնչեցին նաև Վահրամ Թաթևյանի հին՝ Երևանի երաժշտանք շրջանակներում հայտնի «Մոգական լապտերիկ», «Չլուսն» և քաղաքիկ այլ երգեր: Լիլիթ Պիպոյանը իսկապես լիճում:

ԼՈՒՐԵՐ ՍԵՒԱՆՆԻՑ Հաղորդում է մեր սեփ. թղթակից Կիզն Սիմոնյանը

ՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԸ

Սեւանում տեղի ունեցավ հողային բարեփոխումների և սեփականաշնորհման շրջանային հանձնաժողովի նիստը: Լսվեցին հաղորդումներ հողային ռեֆորմի իրականացման ուղղությամբ: Նշվեց, որ բացառությամբ Ծաղկունք գյուղի, շրջանի մյուս բոլոր գյուղերում քնակիչները հիմնականում կողմ են գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսություններ ըստեղծելուն: Ասվեց, որ Վարսեր գյուղին հատկացվել է 210 հեկտար հողատարածություն և այդգործություն համար: Քննարկվեց Դղմաշենի հանձնաժողովի որոշումը այդ գյուղին պատկանող, բայց Սեւանի քարանձավաշրջանն անցած հողերի մի մասը հետ վերադարձնելու մասին: Քննարկվեցին մի շարք կարևոր հարցեր ևս:

ՆՈՐ ՕՐԵՆՔԻ ՀԱՍԱԶԱՅՆ

«Սեկից ավելի քնակավայրեր ընդգրկող ժողովրդական պատգամավորների ավանդույթ և գյուղական խորհուրդների տարանջատման կարգի մասին» որոշման համաձայն Սեւանի շրջանի Սեմյոնովկա գյուղից տարանջատվել է Շովազյուրի, իսկ Նորաշենից՝ Չալովկայի գյուղական խորհուրդը: Փոփոխությունները կատարվել են՝ հաշվի առնելով գյուղական համայնքների դիմումները:

ԴՊՐԱՆՈՅ ԹԵՐԱԿՈՉՈՒՄ

Այսպիսի տարի ամառը Սեւանի թերակղզում գտնվող վանքը սկսեց գործել: Վանահայր նշանակվեց Տ. Խորեն արքեպ Մարտիրոսյանը: Վերջինիս ջանքերով արդեն գործում է վանքին կից դպրոց: Ուսման տեւողությունը երեք տարի է, ուսուցանում են հին կտակարան, նոր կտակարան, քրիստոնեական Վարք Սրբոյ, գրաբար, հայոց պատմություն, անգլերեն և այլն: Ռասախոսները հրավիրված են Երեւանից, Արարատյան թեմից և Սեւանից:

Կառավարման համաժողովի նախագահի մասնաճյուղ է բացվել Սեւանում: Այն ունի յոթ ֆակուլտետ, ինչպես նաև հեռակա ուսուցման բաժին: Ուսուցումը վճարովի է:



Փետրվարյան օրերի երգերը Արամ Խաչատրյան համերգային մեծ դահլիճում

# «ԱԶԳ»Ը ԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՅԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐՈՎ

ՁԱՊՈՒՄ



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ռամկավար Ազատական կուսակցության հետևողական ու կիզակցության շահագրգռանքներն մեկը կը հանդիսանայ իր մամուլին ընթերցումն ու տարածումը սփիւթի համարեա իրաքանչիւր գաղութները:

Ի պատի մեր կուսակցության, այդ առաքելության մէջ ոչ միայն յաջողած է ան, այլ նոր նուաճումներ արձանագրած՝ ռամկավար մամուլի իր համասփիւթեան ցանցով:

Ռամկավար ազատական պաշտօնաթերթը՝ Միջին Արևելքի, Եւրոպայի թէ Ամերիկաներու մէջ, ունեցած են, ունին եւ անպայմանօրէն՝ պիտի ունենան իրենց անգնահատելի դերն ու կշռող դիրքը՝ արձագանգելու հայ ժողովուրդը յուզող կամ տագնապեցնող հարցերուն:

Անուշտ, մեր մամուլ ցանցը կը ձգտի այս նպատակներին իրագործման ոչ միայն քայլ պահելու համար տեղական կամ միջազգային անցուղարձներուն, այլև իր ընթերցողները հաղորդակից դարձնելու ազգային հրատապ հարցերուն, որոնց այնքան այրող կարիքն ու պահանջը ունին անոնք:

Դժբախտաբար, անցնող 70 տարիներուն, հայրենաբնակ մեր ժողովուրդը ի վիճակի չեղաւ պաշտօնապէս ազնուելու կամ ըմբռնելու սփիւթահայ մամուլը, հետեւաբար այդ կալուածը իրեն համար մնաց անձանցօք, անտեղեկ եղաւ անոր քովանդակութեան, դիրքորոշումներն, տեսակետներն, կեցութեանը եւ ուղեգիծն, ինչ որ յաճախ պատճառ դարձաւ անգիտութեանց:

Հոն առաքուող սահմանափակ թիւերն ալ ենթարկուեցան սաստիկ գրաբնութեանց,

սեղմումներու, երբեմն ալ «անհետացման», լաւագոյն պարագային՝ կարգ մը «մեռնաշնորհներ» միայն օգտուեցան անոնցմ:

Ներկայիս սակայն, պայմանները, պարագաներն ու կարելիութիւնները փոփոխած են, հայրենական պաշտօնական մամուլին կողքին, ստեղծուած են տասնակներով հրատարակութիւններ, որոնց կարգին՝ ըսփիւթահայ կազմակերպութիւններու ենթակայ (կամ հովանավորեալ) պաշտօնաթերթեր:

Եւ որպէսզի հայրենի ժողովուրդը կարենայ լիովին հասկնալ, թէ սփիւթահայ յատկապէս քաղաքական կազմակերպութիւնները ի՞նչ կը ներկայացնեն, ի՞նչպէս կը գործեն, ի՞նչպիսի հիմնադրի (կամ փլաքփորմ) որդեգրած են, բացարձակ անհրաժեշտութիւն կը դառնայ համապատասխան թերթերու հիմնումն ու հրատարակութիւնը հոն:

Աւելին՝ որպէսզի տեղունյ հասարակութիւնը առիթը ունենայ առարկայական տուեալներով իրագրել դառնալու միջազգային իրադարձութիւններուն թէ արտաշխարհի հայութեան կեանքի հոլովոյթին, կեցութեանը, ու նոր խնդրումներուն, այսօրինակ թերթերը կոչուող պիտի ունենան այդ «բացերը» լրացնելու վնն աշխատանքին:

Հայրենական այս մտահոգութիւններն ու մանաւանդ նախաձեռնողութեան մեկնելով, Ռամկավար Ազատական կուսակցութեան վերին պատասխանատու մարմիններ, ՌԱԿ Երեսնի Մարտն ու տեղեկատուութեան գրասենեակի կողքին հիմը դրին հայրենական առաջին պաշտօնաթերթին՝ «ԱԶԳ»ին:

«ԱԶԳ»ը, անընկալաբար, պիտի դառնայ այն ամբողջական պատուանդանը, որուն շնորհիւ հայրենի ժողովուրդը պիտի հաղորդուի ռամկավարական սկզբունքներուն ու մտածողութեանց, որոնք սակայն չունենան եւ չլլան լոկ չափանիշերով, այլ գտնեն անոնց մէջ հանրօգուտը եւ հեռանկարայինը:

Տակաւին, «ԱԶԳ» պիտի վերածուի այն գաղափարախօսական դարբնոցին, ուր պիտի արտագոյն մեր դիրքորոշումներն ու դատումները հայրենի նոր պետականութեան նկատմամբ, անշուշտ զայն զօրացնելու ազգավարութեամբ, միաժամանակ չընկրկելով քննադատելու հոն՝ ուր անհրաժեշտութիւնը կը տեսնուի, վերապահութիւնը կը պահանջէ:

Կամրջումի եւ օղակումի նուիրական դերով հանդէս եկող «ԱԶԳ»ը, պիտի դառնայ իր ազգին ազգային հարցերուն պայծառ հայելին, հայ ժողովուրդին պահանջատիրութեան իրաւունքներուն ախոյեաններն, հայրենիքի ինքնիշխանութեան պաշտպաններն, Հայաստանի տնտեսութեան հզօրացման գործնապաշտ մասկիւրաններն եւ հայ եկեղեցույ միասնականութեան դրօշակակիրներն:

Այս ձեւով, մեր կուսակցութեան ռամկավարական եւ ազատական գաղափարախօսութիւնը, հիմնուած ժողովրդավարական սկզբունքներու վրայ, պիտի դառնայ հայրենի եւ Արցախի մեր ժողովուրդին, ինչպէս նաեւ՝ «ներքին սփիւթ»ի սեփականութիւնը:

26 փետրվարի, 1991

## Չկրկնուելիք պատմութիւն

ԱՐՓԻ ԹՈԹՈՅԵԱՆ, ՅԱՄԻԼՅԱՆ

1990 յունուար 26-ին Ուկրաինայի Բոռիսպոլ քաղաքէն Նիւ-Եորքի օդանաւը առնելու կը պատրաստուի Երեսնի փոխադրապետ, երեսնիւն Բարզէն Վարդանեան: Ան իրեն ներկայացուած հարցաթերթին մէջ կը նշէ թէ ոչ զէնք, զինամթերք, ոչ թմրեցուցիչ, ոչ հնարածք առարկայ, ոչ ալ տարադրամ կամ խորհրդային դրամ ունի իր պայուսակներուն մէջ: Ըստ մաքսատան տեսուչին տեղեկագրին, ան միայն կ'ըսէ թէ հեռը ունի նկարներ, որոնք որոշ արժէք մը չեն ներկայացնիր: Յետոյ, ըստուգման ժամանակ պայուսակներու պարունակութիւնը ցոյց տուող գործիքին վրայ կ'երեւին օղի կամ կնոջական մատանիի նմանող իրեր: Ատոնք պատճառ կ'ըլլան, որ Երեսնի փոխադրապետը ենթարկուի մանրագին ստուգումի. կը բացուին պայուսակները ու երեսն կուգան չորս պաստառներ, մէկը հին շրջանակի մէջ «Վ. Ն. Վասիլիւն, 1910» մակագրութեամբ: Բ. Վարդանեան կը բացատրէ թէ գեղարուեստի սրահն մը ձեռք բերած է զանոնք, ապա կը սրբագրէ՝ «գեղարուեստի սրահը» վերածելով «հնավաճառի խանութ»ի: Իսկ երբ իրեն ցոյց կը տրուի նկարներն մէկուն վրայի նուիրատուական մակագրութիւնը, ան կը հաստատէ թէ նուէր են անոնք: Այդ «նուէր»ներուն քով կը գտնուի թուղթ մըն ալ վրան արձանագրուած նկարիչներու անունները, բուսականները եւ գործերուն գիւնները... ամերիկեան տղարով:

Բնութեան ամբողջ տեսողութեան ճամփորդը անդադար կ'առաջարկէ համաձայնիլ ու վերջացնել հարցը: Սակայն մաքսատան պաշտօնատարը կը շարունակէ հետախուզութիւնը ու կը պարզուի, որ մատանիի նմանող իրերը գարդելներ են. ասկէ գտնուած, ճամպուկներն մէկուն մէջ ան կը գտնէ հին գորգ մը:

Մասնագետի մը քննութիւնը ցոյց կուտայ թէ հայկական այդ բուրդեգործը գործ է

ԺՔ. դարու վերջաւորութեան ու Ի. դարու սկզբի: Գեղարուեստական ու պատմական արժէք կը ներկայացնէ ու օրէնքով արգիլուած է զայն երկրին սահմաններէն դուրս հանել: Արժէքը կը գնահատուի 2000 օուրի:

Այս բուրդըն գտնուած Վարդանեանի քով կը գտնուի նաեւ մաս մը խորհրդային դրամ՝ 169 տուար. սակայն այս կէտը յատկապէս Արեւմտաքէն դիտուած, որով նշանակութեան զօրկ ըլլալով, չ'արժէք վրան ծանրանալ:

Այս վերջին գտածոներն ենք «գործը տղամարդավորի կարգադրելու» Վարդանեանի առաջարկին կ'անելու նաեւ իր նշումները, թէ Կիւի քաղաքական դէմքերուն միջու ծանօթներ ունի ինք:

Երբ բոլոր շանքերը ապարդիւն կը մընան, ան դիմում մը կը գրէ Բորիսպոլի մաքսատան պետին բացատրելու համար թէ իր ստորագրած յայտարարագիրը ռուսներն չըլլալով լաւ չէ հասկցած, եւ այլ: Մէկոյի դնելով այն հարցումը թէ նույնիսկ չիմարեն յայտարարագիր մը ներկայացուելու պարագային, փոխադրապետը մը չի՝ գիտնար թէ յանցանք է երկրէն հանել պատմական ու գեղարուեստական արժէքով իրեր, գարդելներ, անցնիք շարունակութեան. Վարդանեան Յունուար 27-ին նամակ-ըրդը մըն ալ կը գրէ խորհ. մաքսատանային վերահսկողութեան զխաւոր վարչութեան առարկելով թէ յայտարարագրին մէջ ոչ մէկ տեղ նշուած է գորգն ու դրամները երկրէն հանելու արգելքը, կը զանգատի որ մաքսատան պաշտօնեաները ամեն անթույլատրելի ձեւով վիրատրած են զինքը, նուստացուցած՝ մարդկային ու ազգային իր արժանապատուութիւնը:

Ոչ Կիւիի ազդեցիկ անձնատրութիւններու հետ ծանօթութիւնը, ոչ ալ մարդկային ու ազգային վիրատրուած արժանապատուութիւնը նկատի՝ կ'առնուի սակայն Բ. Վար

դանեան մաքսաննգութեան յանցանքով կը դատապարտուի 50 օուրի տուգանք վճարելու: Խորհրդային մաքսատան վարչութեան պետը, վաւերացնելով տրուած պատիժը, քաղաքավարութեամբ կ'անելցնէ թէ Վարդանեան ո'ր դատարաններուն կըրնայ դիմել, առարկելու համար իր մասին տրուած որոշումին դէմ:

Փաստագրական տուեալներու մէջբերումներով գրի առնուած այս հրապարակումը կատարուած է «Երեկոյեան Երեսն»-ի Փետրուար 12-ի թիւին մէջ. խմբագրութիւնը կ'ըսէ թէ տեղեկ չեն Վարդանեանի դատարան դիմած ըլլալուն, սակայն ամէն քան զատ գոյութիւն ունի նաեւ բարոյական դատ. ապա հաստատականութեամբ կ'ըսուի որ այդ դատը տեսնողը միշտ արդարամիտ ժողովուրդը կ'ըլլայ:

Ո՛վ գիտէ թէ Հայաստանի արդարամիտ ժողովուրդը տնտեսական ու քաղաքական հազարումիկ նեղութեան մէջ ժամանակ ու սիրտ կ'ունենա՞յ այդ դատով զբաղելու. սակայն մաքսաննգութեան այս պատմութիւնը կարելի է գոնէ անով, որ կը լրացնէ արժէքատր առարկաներու Հայաստանէն բռնագողթի երեսնոյթին մասին ըստածներն ու գրուածները: Հարցը հոն է հաւանաբար թէ Վարդանեաններն են, որ ծագում կուտան պատմաներու, պատմական իրերու արտագողթին, թէ ստեղծուած կացութիւնը այնքան վարակիչ է, որ Վարդանեաններ անգամ չեն յաջողած գերծ մնալ անկէ: Ամէն պարագայի, այս բուրդին մէջ զխաւոր տուժողը ո՛չ թանգարաններն են այնքան, ո՛չ ալ պետական ցուցասրահները, որոնք օրէ օր կը բեռնաբարութիւն, այլ՝ մարդկայինը իրենց մնայն՝ մեր ազգային արժանապատուութիւնը. մե՛ղք որ Վարդանեաններ կամ ուրիշներ յապարդումով միայն կը յիշեն անոր գոյութիւնը, երբ ցնիւն դուրս գալու այլ միջոց չի մնար իրենց: Ը

Հայկական Ռուսմասփրութիւնների եւ Հետապետութիւնների Ազգային կենտրոնի (NAASR) հրատարակած տեղեկագրից քաղում ենք հետեւյալ նոր հրատարակութիւնների անունները, որոնք վերջերս հարստացրել են կենտրոնի գրադարանը:

**Հայ Ավետարանական Շարժում: Ինչու՞ էր անհրաժեշտ, ինչու՞ անջատվեց մյուսներէն:**

Հեղինակ՝ Հակոբ Չարմաքչյան: Գիրքը Ռուսմասփրութիւն է Հայ Բողոքական եկեղեցական շարժումը եւ դրանում ամերիկյան միփոներների դերը: Փորձում է գնահատել հայ ավետարանականների ուժեղ եւ թույլ կողմերը: \$12:

**Կայսրեր, ցարեր եւ կոմիսարներ:** Յեղիակ Անդրանիկ Չելեքյան: Գիտական մի Ռուսմասփրութիւն Հայաստանի եւ նրա հարեւանների (Բյուզանդական կայսրութիւն, ցարական Ռուսիա, խորհրդային Ռուսաստան) հարաբերութիւնների մասին: Չեստեղծած են 2 քարտեզ որպէս ներդիր: \$5:

**Դիտարկելով մենք մեզ եւ պատմութիւնը: Ողջակիզում եւ մարդկային վերաբերմունք:**

Շանթագրված մատենագիտութիւն: Պատրաստված Մարգարիտ Դրոյի կողմից: Գըրքում ներկայացված են տարիների ընթացքում լույս տեսած այնպիսի գրքեր, որոնցում նկարագրվում են մարդկային վերաբերմունքը հրեաների, հայերի եւ կամբոջիների ցեղասպանության հանդէպ: Հորրորդ բաժինը ամբողջութեամբ նվիրված է հայկական ցեղասպանութեանը: \$15,95:

**Սպահանքի փոքրամասնութիւնները: Սպահանքի Հայկական Համայնքը: 1587-1722:**

Հեղինակ՝ Վարդան Գրիգորյան: Սպահանքի հայկական համայնքի յուրահատուկ պատմութիւնն է, դիտված 16-րդ դարի վերջին նրա հիմնադրումից մինչեւ քայքայումը՝ ճախ Արքայի հետնորդների գործողութիւնների եւ միջազգային կայսրության փոփոխման հետեւանքով: \$15:

**Խաչն ու մահիկը:** Հեղինակ՝ Լիւնի Ավագյան: Սողոմոն Թեւիկոյանի մասին 1965 թվականին լույս տեսած գրքի վերահրատարակումը: Այն պատմում է գլխավորապէս այն վկայութիւնների մասին, որոնք գերմանական դատարանում մերկայորի ցեղասպանության կազմակերպիչների: Սեւ ու սպիտակ նկարներով: \$18,95:

**Ամեն ոք այստեղ չէ: Հայկական ցեղասպանութիւնից մազապուրծ փրկված ընտանիքներ:**

Ռուսմասփրութիւն-ուղեկոյց: Հեղինակ՝ Ռիչիան Փարսոնկ: Ընթերցանութեան նյութեր Հայկական ցեղասպանության մասին, հատկապէս պատրաստված օգտագործելու (տեսաֆիլմերի հետ միասին) երկրորդական վարժարաններում մարդու իրավունքների կրկնված դասաժամերի ընթացքում: \$10:

**Խորհրդանիշներ: Առասպել եւ հետաքրքրութիւն:**

Մշակութիւն քաղաքականութիւնը ամերիկական քննադատական շրջանում: Հեղինակ՝ Չեկի Ֆիլիպս: Խորհրդանիշների եւ քաղաքականութեան միջեւ գոյութիւն ունեցող հարաբերութիւնների մասին գրված մի Ռուսմասփրութիւն, որ օգնում է բացահայտելու հայերի ազգային ինքնութիւնը Սիւսյայի Լահաններում: Գիրքը զխաւորապէս հիմնված է Բոստոնի շրջանում հայերի հետ հարցապարզութիւնների վրա: \$47:

**Միջանցք: Արձակ էջեր:**

Հեղինակ՝ Լուսնշեւեաթեան Սայլ Գրիգորյան, որը Սան Դիեգոյում գտնվող Կալիֆորնիա համալսարանում գեղարվեստական արձակ գրականութիւն է դասավանդում: \$10:

**Հայկական արվեստ:** Հեղինակ՝ ժան Միշել Թիերի: Դարերի ընթացքում ստեղծագործող հայ նկարիչների, ճարտարապետների եւ գեղագիրների յուրահատուկ դրսեւորումների մասին բազմակողմանի մի Ռուսմասփրութիւն, որն ընդգրկում է նաեւ 959 նկար, պատկերասրահներ եւ աղյուսակներ: \$130: Ը

# Հայ-թուրքական հարաբերություններ

## ՀԱՅԱՍՏԱՆԸ ՉՊԵՏՔ Է ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՍՏԱՏԻ ԹՈՒՐԹԻԱՅԻ ՀԵՏ

ՀԱՐՈՒԹ ՍԱՍՈՒՆՅԱՆ «Հայկական միջազգային ամսագիր» (AIM)

Ի հակադրություն երկար տարիների ընթացքում մշակված Թուրքիայի հետ ամեն տեսակի հարաբերություններից զգուշանալու քաղաքականության, Հայաստանի նորընտիր կառավարությունը որոշում է ընդունել ամենատրակազմ հարաբերություններ հաստատել մի պետության հետ, որը 1915 թվականից ի վեր հայերի կողմից յիստվել է որպես թշնամի երկիր:

Հայաստանի ղեկավարները պնդում են, որ Թուրքիայի հետ ամենատր անելը չըպետք է պալ մեկնարանվի, այն պետք է

հասկացվի որպես քաղաքական հարաբերություններ հաստատելու փորձ: Նրանց նպատակն է պարզապես անհրաժեշտ ապրանքների ձեռք բերել՝ Հայաստանի տնտեսական առաջընթացն ապահովելու համար: Նրանք հավանաբար հույս ունեն նաև, թե քարիդրացիական հարաբերությունները կընկազմեն Թուրքիայի կողմից սպասվող հնարավոր ամեն մի վտանգ, այնպիսի մի ժամանակաշրջանում, երբ Հայաստանը պատրաստվում է դուրս գալ Մոսկվայի հովանու տակից:

Նշենք, սակայն, որ երեք հայկական քաղաքական կուսակցությունները վճռակապես դեմ են արտահայտվել վերոնշյալ կայքերի հաստատմանը: Հայերի մեծամասնության համար Թուրքիայի հետ տնտեսական համաձայնագիր կնքելը հավասարազոր է արյունաթափա փողերի հետ գործ ունենալուն: Այն քաղաքական անհանդուրժելի է և ամառ է բերում ուժեղ հակազդեցություն: Եթե նույնիսկ ժամանակակից Թուրքիան չէ եղանակ իրագործողը, ապա նա մեղապարտ է այնքան ժամանակ, քանի դեռ շարունակում է ոճիլը հերքելու և սրողելու քարոզչական արշավանքը:

Մի կողմ թողնելով հարցի քաղաքագրական առումները, Թուրքիայի հետ ամենատուրը, մեր կարծիքով, անդամալի վնաս կհասցնի հայկական քաղաքական պահանջախնդրությանը և, ի վերջո, կքայքայի Հայաստանի տնտեսությունը:

Նախ նշենք, որ քոլորովին էլ խելացի չէ հույսը դնել Թուրքիայի վրա, որպես ամենատրական գործընկերի: Անհամաձայնության չնչին նշույլի դեպքում թուրքերը փակելու են երկու երկրների միջև գոյություն ունեցող բոլոր ամենատրական ճանապարհները, իրենց կողմից մատակարարվող ամեն տեսակի ապրանքների զգալի պակաս առաջացնելով մեզ մոտ: Հազիվ թե կարելի լինի մեզ համար մտաճալ Ադրբեյջանի կողմից շրջափակման դառը դասը, որը

քառացիորեն խեղց Հայաստանի և Ղարաբաղի տնտեսությունը:

Ներմուծված ապրանքների 80 տոկոսը Հայաստանը ստանում է Ադրբեյջանի տարածքով: Մեր երկիրը փաստորեն զտնվում է այդ հարեան հանրապետության «ողորմածության» տակ:

Մատակարարման ճանապարհները այժմ Ադրբեյջանից Թուրքիա տեղափոխելը չի կարելի հարցի լուծում համարել: Այն ավելի նմանվելու է անձրևից փախչելով կարկուտի տակ ընկնելուն:

Հիմա ավելի՛ հուսալի ամենատրական գործընկերներ ձեռք բերելու ժամանակն է, քանի դեռ կախման մեջ չենք ընկել Թուրքիայից, որը մեզ մի օր կարող է ենթարկել տնտեսական շանտաժի:

Հակառակ Հայաստանի ղեկավարների պնդումներին՝ քաղաքականությունը և ժողովրդական տնտեսությունը անբաժանելի են իրարից: Հնախավոր չէ ամենատր անել Թուրքիայի հետ և միաժամանակ ակտիվ պայքար մղել ցեղասպանության ճանաչման և Արևմտահայաստանի գրավյալ մեր հողերի վերագործման ի խնդիր: Տնտեսական հարաբերությունների պահպանման համար մենք ակտիվորեն ենք լինելու գիշտումների գնալ քաղաքական հարցերում:

Ռիսկի ատիժանը ճիշտ գնահատելու համար, մենք պետք է հարցին մտնենք նաև թուրքական տեսանկյունից: Ամենատուրը Հայաստանի հետ Թուրքիայի համընդհանուր տնտեսական ծրագրերի լոկ չնչին մասն է կազմելու, մինչդեռ Թուրքիան առավել հետաքրքրություն է ցուցաբերելու այդ հարաբերությունների քաղաքական հետևանքների հարցում: Նրանք շատ լավ գիտակցում են, որ այդպիսով կկարողանան հակադրվել հայերի կողմից ներկայացվող որևէ քաղաքական պահանջի, պարզապես նշելով, որ Թուրքիան և Հայաստանը «քարիդրացիական հարաբերությունների» մեջ են: Ամերիկյան կոնգրեսում ցեղասպա-

նության վերաբերյալ մի քանաձե կամ եւրոպական խորհրդարանում ու ՄԱԿ-ում որևէ այլ միջոցառում անցկացնելու հայերի կողմից գործադրվող ջանքերը հարցականի տակ են դրվելու և խստորեն հակակր-ջովելու են: Այդպիսի քանաձեների կամ միջոցառումների հակառակորդները հիանալի ափսոս են ունենալու նշելու, որ «չեն ցանկանում Հայաստանի տնտեսական շահերին վնասել»:

Նման օրինակ արդեն գոյություն ունի: Հենկելով Հայաստանի Հանրապետության նախագահի այն խոսքերի վրա, թե մեր տաղերություն կա Թուրքիայի հետ տնտեսական հարաբերություններ մշակել, Ամերիկայի կոնգրեսականներից մեկը՝ Զիմ Մուդին (դեմոկրատ Վիսկոնսին նահանգից) ներկայացուցիչների պալատի բոլոր գործընկերներին ուղղված հոկտեմբերի 12-ի իր շրջաբերականով նրանց ուշադրություն է հրավիրում «Վաշինգտոն թայմզ» թերթի հոկտեմբերի 4-ի համարում տպագրված նախագահ Լեոն Տեր-Պետրոսյանի հետ անցկացված «գրավիչ հարցազրույցի» վրա:

Կոնգրեսական Մուդին, որը երկար ժամանակ պայքարում է հայկական քանաձեի դեմ, հատկապես երկու պարբերություն է առանձնացնում այդ հարցազրույցից: Բերենք նրա նախապես հիշատակված այդ հատվածները:

«Առաջինն այն է, որ Հայաստանում ապրող հայերը այնքան էլ չափազանցված չեն հետամուտ լինելու ցեղասպանության հողի վրա 75 տարի շարունակ Թուրքիայի և Հայաստանի միջև գոյություն ունեցող նախկին հակամարտություններին: Կարծում եմ (հանրազրույցում) հատուկ ուշադրության է արժանի այն մասը, որտեղ Հայաստանի նախագահը նշում է, թե միայն ըստիությունաբանությունն է, այսինքն ամերիկյանայությունը, դեռևս մերժում հրաժարվել այդ խնդրից»:

Հարունակությունը՝ 7-րդ էջում

## ԸՆԴՂԷՄ ԹՈՒՐԹԻՈՅ ՀԵՏ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՍԻՐԱԼԻՐ ԿԱՊԵՐՈՒ

ՎԱԶԷ ՍԵՄԵՐԵՃԵԱՆ, «ՆՈՐ ՕՐ»

Նոյն հոգեբանության և նույն ատեն, ազգային անմիտ քաղաքական դատաբանության արդյունք է Թուրքիոյ հետ ամեն գնով ամենատրական կապերի հաստատելու մարմա-ջը: Տեսականորեն միայն ճիշդ կը գտնենք Թուրքիա կոչում խեղճ հարեանին հետ ամենատուրը ընել, ոչխարի միս գնել և Հայաստանի արտադրություններով վճարել:

Ամեն գնով յարաբերություններ հաստատելու այս զանախաղը կուզայ հաստատելու, որ լեզուարանն քաղաքագետի վերածուած Ռաֆայել Իշխանյանի «Երրորդ ուժի քաղաքական օրենք»-ը ի գորտ պիտի դառնայ Հայաստանի պետական ժառանգության մէջ: Անգամ մը ես պետք է հարցնել, Ռուսաստանին կանակ դարձնել անպայմանօրէն Թուրքիոյ ծախտով նայի՞լ կը նշանակէ: Հայաստանի քաղաքական և տնտեսական ապագան երկու ուժերու յարաբերութեամբ լուծելու սխալը ժամանակին գործունցաւ և թոյլատրելի չէ որ սխալը կրկնուի անկախութեան գործընթացը որդեգրած Հայաստանին կողմէ:

Աւելին, Հայաստանի արտաքին ամենատուրի պատասխանատուները տեղեակ են թէ Անգարան որքանով շահագրգռուած է արեւելք դարձնել իր ուշադրութիւնը երբ Հասարակաց Շուկան և Եւրոպական Միութիւնը անլի կարեւոր առաջադրանքներ են Թուրքիոյ համար: Հարցեր են առնց, որոնք մեծաշինը բայց ծիծաղելի այցելութիւններով, Անգարայի հետաւանացոյցին չընդորոշած հարցազրույցներով, Արմենիոյի հաղորդագրութիւններով չեն լուծուի. այլ

լուս դիւանագիտութեամբ կը հետապնդուի, լրջութեամբ կը վերլուծուի:

Իրանը ոչ-խորհրդային գործընկեր դառնալու բոլոր հնարաւորութիւնները կը ներկայացնէ: Հայաստանի սահմանակից, հրսկայ շուկայի կարելիութիւններով օժտուած հարուստ երկիր, բնական հարստութիւններով ճանաչուած պետութիւն, հում քար-իւղի, բնական գազի, քարիւղաքիմիական հսկայ ճարտարարուեստի անսահման աղբիւր, ճարտարարուեստական արտադրութիւններով հարուստ Իրանի հետ ամենատրական յարաբերութիւններ հաստատելու մասին տակալին լրատուութիւն չլսուցաւ Հայաստանին:

Աւելին, Իրանը չէ այն երկիրը, որում տնտեսական-քաղաքական-ազգայական առողջութիւնը մեծ քարերարի մը քարնացակամութեան կախնալ է: Թուրքիան Մ. Նահանգները ունի որպէս նեղ օրերու փրկիչ, իսկ Իրանը՝ իր ընդերքէն շահագործուող հսկայ հարստութեան կ'ապալիւնի միայն, անկախ՝ շրջանային դաշնագրութիւններէ, Իրանի տնտեսութիւնը ամեն տեսակ ապահովութիւն պետք է ներքնէ Հայաստանի արտաքին առեւտրական ղեկավարներուն, եթէ նպատակը խնդող ուտել է և ոչ՝ պարտիզպան ծծծել...:

Իրանի հետ ամենատրական յարաբերութիւններու հաստատումը ապահովութիւնը կու տայ Հայաստանին, որ քաղաքական նախապայմաններ պիտի չդրուին իրեն, ինչպէս թրքական մամուլը կը թելադրէ՝ Հայաստան-Թուրքիա կապերու հաստատումն

առաջ իսկ: Հայաստանն ու հայ ժողովուրդը ոչ արհմի հարց ունին Իրանի կառավարութեամբ հետ, ոչ չափաշակուած հայրենիքի խնդիր կայ, ոչ հին հաշիւներ, ոչ այ կազմելու, մինչդեռ Թուրքիան առավել հետաքրքրություն է ցուցաբերելու այդ հարաբերությունների քաղաքական հետևանքների հարցում: Նրանք շատ լավ գիտակցում են, որ այդպիսով կկարողանան հակադրվել հայերի կողմից ներկայացվող որևէ քաղաքական պահանջի, պարզապես նշելով, որ Թուրքիան և Հայաստանը «քարիդրացիական հարաբերությունների» մեջ են: Ամերիկյան կոնգրեսում ցեղասպա-

նության վերաբերյալ մի քանաձե կամ եւրոպական խորհրդարանում ու ՄԱԿ-ում որևէ այլ միջոցառում անցկացնելու հայերի կողմից գործադրվող ջանքերը հարցականի տակ են դրվելու և խստորեն հակակր-ջովելու են: Այդպիսի քանաձեների կամ միջոցառումների հակառակորդները հիանալի ափսոս են ունենալու նշելու, որ «չեն ցանկանում Հայաստանի տնտեսական շահերին վնասել»:

Նման օրինակ արդեն գոյություն ունի: Հենկելով Հայաստանի Հանրապետության նախագահի այն խոսքերի վրա, թե մեր տաղերություն կա Թուրքիայի հետ տնտեսական հարաբերություններ մշակել, Ամերիկայի կոնգրեսականներից մեկը՝ Զիմ Մուդին (դեմոկրատ Վիսկոնսին նահանգից) ներկայացուցիչների պալատի բոլոր գործընկերներին ուղղված հոկտեմբերի 12-ի իր շրջաբերականով նրանց ուշադրություն է հրավիրում «Վաշինգտոն թայմզ» թերթի հոկտեմբերի 4-ի համարում տպագրված նախագահ Լեոն Տեր-Պետրոսյանի հետ անցկացված «գրավիչ հարցազրույցի» վրա:

Անգամ մը ես ամենատուրը որ Թուրքիոյ հետ ամենատրական կամ այլ տեսակի յարաբերութիւններ մշակելու անգոյշ մօտեցումը, անուղղակի հակազդեցութիւնն է թէ՛ հայ կոմունիստներու ամբողջական ենթարկուածութեան՝ Մոսկուայի հանդէպ, եւ թէ՛ այսօրուան Մոսկուայի քաղաքական կեցուածքին հանդէպ. Հայաստանի ղեկավարութեան քարկութիւնն է որ կրնայ մեղմանալ երբ քանակաութիւնն ու բնականութիւնը վերադառնայ Հայաստանին:

Խորհրդային միս փոքր հանրապետութիւնները հաւաքական նոյն հոգեվիճակը կ'ապրին: Մոլդովան նոյնիսկ կը մտածէ իր գոյութեան վերջ տալ, միանալ ուզելով Ռումանիոյ հետ, որպէս լուծում տնտեսական ողբերգութեան: Բայքեան երեք երկիրները ի վերջոյ ստիպուած պիտի ըլլան իրենց բախտն ու ճակատագիրը կապել արեւմտաեւրոպական շուկային:

Անկարելի չէ որ այս աճապարանքը արդարանալի չըլլայ: Նախանշանները շատ են և վտանգաւոր: Խորհրդային «վերակառուցում»-ի այս անցման շրջանը կրնայ և խրի հին կաշառակերութեան, կամայականութեան, ծանր դիւանակալութեան, կողմնակալութեան և նոր դիկտատուրայի տիրողին մէջ: Հրաժարած Շեվարոնաձէն անհագանգը հնչեցուց: Հաստալ ազոդը իր գլուխը պիտի փրկէ: Անօթի և տառապած ժողովուրդները չեն կրնար գորպայովան հրաշքներու սպասել: Ընկղմող նալն առաջին փախուստ տնտեսները կ'ըլլան վերջին խնդացողները: օ

# ԳԱՆՔ ՀԱՅԱՍՏԱՆ ԻՆՉ ԱՆԵՆՔ

## Աղբբեջանի ջարդերից փրկվածները Ամերիկայներ են երազում

Մոսկվա, «Սովետնայա» հյուրանոց: Այստեղ ապաստանել է 1990-ի հունվարի Բաքվի կոտորածներից մազապուրծ եղած, 148 հոգուց բաղկացած մի խումբ: Սենյակները 12-16 հոգիանոց են, այն էլ տարբեր ազգությունների մարդկանց հետ համատեղ: Մթնոլորտը ճնշող էր: Տպալորությունն այնպիսին էր, որ նույնիսկ երեսանցից եկած փախստականներն էին նրանց խղճում: Այդ վիճակը քնական հարց էր առաջացնում՝ թե ինչու՞ չեն տեղափոխվում Հայաստան: Ի վերջո, եթե այնտեղ էլ վատ է, ապա ավելի լավ չէ՞ հայրենիքում վատ ապրել, քան օտարության մեջ:

Մարդկանց մեծամասնությունը չէր աշխատում զանազան պատճառներով: Ոմանք ցանկություն չունեին աշխատելու, մնացածներն էլ անաշխատունակ էին: Նրանց մի մասին առաջարկ էր արվել աշխատանք փնտրել... Սիրիում:

Մարդիկ անհանգիստ էին, ջղային, միջյանց նկատմամբ անհանդուրժող: Անախորժությունները հատկապես սրվում են օգնություն բաժանելու ժամանակ: Լինում են նրբեն ծեծկռտություններ: Փախստականների խմբի ղեկավար Գրիշա Ավանեսյանը պատմում է. «Մոսկվայում փախստականների մի քանի խմբեր են կազմվել, որոնցից յուրաքանչյուրն ունի իր ղեկավարը՝ ընտրված հենց փախստականների կողմից: Մեր խումբը Մոսկվայում է գտնվում մայիսից: Ունենք համակարգող կոմիտե՝ Մոսկվայի գլխամասային ձեռնարկություններից մեկի ինժեներ Ռոման Օզանեսյանի գլխավորությամբ: Մեր պորտբեռն ոչ ոք չի կարող լուծել: Մեզ առաջարկում են Ռուսաստանի սովետներն ու կոլխոզները: Սակայն մեծամասնությունը նորմալ գոյությունը ապահովելու նպատակով ցանկություն ունի նոր կյանք սկսելու Միությունից դուրս, ո՞ր երկիրն ուզում է լինի, միայն թե այս բանսից դուրս զան: Հայաստանում անհնար է լուծել մեր հարցերը, այնտեղ մտնել միլիոն մարդ սպասում է քնակարանի հերթի: Գիտենք որ Մ. Նահանգներում էլ հեշտ չի լինի, սակայն ձեռքներս ծալած չենք նստի, ինքներս պիտի ստեղծենք: Գոնե այն ժամանակ ինչ-որ որոշակիություն ու հույս կմտնի մեր կյանք: Թե չէ որքան կարելի է նստել հրաքիի վրա ու սպասել նրա ժայթքմանը: Ուր ուզում է լինի, միայն թե դուրս գանք այս քառսից:

Հարցնում եք, թե ինչու՞ չենք ուզում փասին կատուցել մեր հայրենիքը, օտարի բուն ենք ուզում շենացնել: Ենթարկվում վաղը բոլորս եկանք երեսան: Փախստականներից մի մասը ծերեր են, մի մասը խառնամուսնացած: Փոքր, դպրոցահասակ երեխաներ ունեցողները շատ են: Ի՞նչ պիտի լինի նրանց վիճակը, ինչպե՞ս պիտի ընդունեն նրանց: Առանց այն էլ քայքայված Հայաստանը ինչպե՞ս պիտի լուծի նրանց պրոբլեմները:

Հայաստանը շատ քիչ է տառապել մեր վիշտը հասկանալու համար: Մենք մշտական ներկայացուցչությունում չենք պես էլինք պրակտիկ: Վերջապես Մոսկվայում Հայաստանի մշտական ներկայացուցչությունն է այստեղ Հայաստանի շահերն ու հետաքրքրությունները ներկայացնողը: Լավ կլինի, որ նրանք զբաղվեն նաև փախստականներով: Մինչդեռ նվազագույն ծրագիրը չի կատարվում: Կարճ ասած, ժողովուրդը հոգնել է այդ ամենից: Հայրենիք տեղափոխվելու մասին խոսակցություններ եղան, քայքայված միջավայրում արձագանք չստացվեց: Չեն հավատում, որ լավ կլինի: Հայաստանից ոչ ոք մեզով չի հետաքրքրվում, քայքայվածներ եկել են «Չիկագո Տրիբյունից» ու այլ թերթերից:

Օգնություն բաժանելու գործն էլ շատ դժվար է, միշտ անախորժություններ են լինում: Մանրոցները, որ երբեմն ստացվում են արտասահմանից՝ ներկայացուցչության հասցեով, քնական է, բոլորին չի հասնում հավասարապես: Թող չնեղանան ծախսեր

կան: Դրա համար էլ դժգոհությունները շատ են լինում, որովհետև օգնության քաշման մեխանիզմը կարիք ունի վերափոխվել: Ծավոք, վերքերը կարելի է բուժել միայն գործիմացությամբ:

Անաշառ լինելու համար եղանք նաև Մոսկվայի Հայաստանի մշտական ներկայացուցչությունում: Ահա ի՞նչ ասացին մեզ այնտեղ.

-1990 թ-ի Բաքվի հայերի հունվարյան կոտորածից հետո, մարտ ամսին Մոսկվայում հնչեց փախստականների թիվը հասել էր



16 հազարի: Բացի Հայաստանի մշտական ներկայացուցչությունում սկզբնական շրջանում ստեղծված փախստականների հարցով զբաղվող կոմիտեից, նրանց հարցով զբաղվել է նաև ԽՍՀՄ աշխատանքային պետկոմը: Իսկ ռուս փախստականների հայտնությունը հետո պետկոմում ստեղծվեց նաև Միության մասշտաբով փախստականների հարցով զբաղվող կոմիտե:

Տեղի իշխանությունների օգնությամբ նրանց ժամանակավոր տեղավորելուց հետո, հայկական ներկայացուցչության առաջնահերթ խնդիրն է եղել փախստականներին համոզելն ու Հայաստան ուղարկելը, որովհետև, ի սկզբանե, Մոսկվայի իշխանությունների կողմից հրաման է արձակվել Մոսկվայում ու նրա մարզերում հայ փախստականներին չտեղավորելու մասին: Համոզելու այդ դժվար ու երկարատև աշխատանքներից հետո այնտեղ ժամանակավորապես մնացել են մոտ 2500 հոգի, որոնց մեծ մասը խառն ամուսնության ընկածներն են: Շատերն էլ մնացել են Միացյալ Նահանգներ մեկնելու քույրատուքյուն ստանալու համար: Բացի դրանից, մոտ 5000 հոգի էլ մեկնել են Հյուսիսային Կովկաս: Նրանք հիմնականում ցանկություն են հայտնել տեղավորվել Ռուսաստանի ավելի հարավային մարզերում: Սակայն, բացի իրենց ծանոթների ու հարազատների մոտ տեղավորվածներից, այդ մարզերի իշխանությունները կորակապես հրաժարվել են փախստականներին ընդունելուց, պատճառաբանելով, որ դա կարող է դժգոհություն առաջացնել տեղի բնակչության մեջ ու ապակայունացնել վիճակը: Մանավանդ որ Բաքվում զոհված ռուս զինվորների մեծ մասը եղել են հենց այդ շրջաններից ու, այդ փաստը մեծ հակակոնք է առաջացրել հայ փախստականների ու, առհասարակ, երեսույթի հանդեպ: Նրանց համար հետաքրքիր չէ, թե ով է մեղավորը, կարևորը փաստն է:

Եւ այսպես, փախստականների հիմնական զանգվածը Հայաստան ուղարկելուց հետո նրանց հետ կապված աշխատանքները ներկայացուցչությունը համարել է ավարտված: Դրանից հետո փախստականները իրենք ստեղծել են նախաձեռնող խումբ: Իրենց հուզող հարցերը լուծելու համար նրանց օգնում են Մոսկվայի հասարակայնության տարբեր բնագավառների գիտակ մարդիկ, ինչպես նաև պատգամավորներ:

Մոսկվայի պատգամավորների խորհուրդը ստեղծել է փախստականների հարցով ըզբաղվող հանձնախումբ, որի նախագահն է Մելնիկովը: Մի 3-4 այլ պատգամավորների հետ նա եղել է նույնիսկ Հայաստանում, հանդիպել փախստականների հարցով զբաղվող ղեկավարների հետ, եղել աղետի գոտում ու համոզվել, որ, իրոք, Հայաստանն ի վիճակի չէ նրանց ընդունելու: Մոսկվա վերադառնալուց հետո նրանց հարց են բարձրացրել, որ փախստականներին ապաստան տված հյուրանոցները դուրս չհանեն նրանց, մի քիչ էլ սպասեն: Իսկ հյուրանոցների համար ֆինանսավորման հարցը

դրված է այն կազմակերպությունների ու ձեռնարկությունների վրա, որոնք ընդունել են փախստականներին:

Փախստականներին իրավունք է տրվել ժամանակավոր տեղավորվել աշխատանքի առանց գրանցում ունենալու: Ասացին, որ, բացի աշխատունակներից, բոլոր աշխատել ցանկացողներն էլ աշխատում են, իսկ աշխատել չցանկացողները զբաղված են սպեկուլյացիայով, հարրեցողությամբ, թմրամուլությամբ ու այլ քաներով: Երբեմն իրենց վատ են պահում, իրար հետ կռվում են,

անպատվում, աղմկում, որն էլ դժգոհություններ է առաջացնում տեղի բնակչության ու հյուրանոցի ղեկավարության մոտ: Հաճախ է հարկ լինում եւ նրանց, եւ հյուրանոցի ղեկավարության հետ բացատրական աշխատանքներ տանել, որպեսզի վերջիններս էլ հասկանան, որ փախստականները խախտված հոգեբանության տեր մարդիկ են ու պետք է հնարավորին չափ ներողամտ լինել նրանց նկատմամբ:

Հայ փախստականների խնդիրն այնտեղ ավելի է բարդացել 60 հազար ռուս փախստականների հայտնվելուց հետո, որոնք, ի վերջո, իրենց հայրենիք են եկել: Իսկ աղբբեջանցի փախստական Մոսկվայում գրեթե չի եղել: Հայաստանից այնտեղ են գնացել ընդամենը 20-25 հոգի, այն էլ մեկ-երկու ամիս աղբբեջանական ներկայացուցչության հյուրանոցում լավ տեղավորվելուց հետո մի քանի անգամ գնացել են Հայաստանի մշտական ներկայացուցչություն, խնդրել, որ իրենց կողմից լքած Նոյնմերյանի շրջանի գյուղերը դատարկեն հայերից ու իրենց հետ վերադարձնեն նախկին բնակավայրերը: Հայաստանի նախկին կառավարությունը առաջարկել է նրանց գալ Հայաստան, տեղում հարցերը լուծել: Նրանք այդպես էլ չեն եկել: Հայ փախստականներից շատերն էլ մի քանի անգամ են եկել Հայաստան ու հետ վերադարձել Մոսկվա, որովհետև ոչ մի կերպ չեն համաձայնվել մեկնել իրենց առաջարկված շրջանները:

Վերջերս Միլանը նամակ է գրել վարչապետ Վազգեն Մանուկյանին, խնդրելով

նրանց աշխատանքներ տանել Մոսկվայում մնացածներին Հայաստան բերելու ուղղությամբ, պատճառաբանելով, որ պետք է տեղավորեն Արևելյան Երոսայի երկրներից վերադարձող զինծառայողների ընտանիքներին: Մյուս կողմից Մոսկվայի իշխանությունները մեծ թվով փախստականներ են սպասում Մերձբայթյան հանրապետություններից: Հայաստանի մշտական ներկայացուցչությունը կրկին անգամ բացատրագիր է ուղարկել Միլանին այն մասին, որ այդ ուղղությամբ հնարավորությունները սպառված են ու, որ մոտ մեկ միլիոն անտուն մարդ ունեցող Հայաստանի վիճակն այնքան ծանր է, որ նա բոլորովին հնարավորություն չունի մարդ ընդունելու: Առայժմ Միլանը լուծել է Միգուցն այդ խնդրությունը համաձայնության նշան է:

Մեզ տված պաշտոնական տեղեկության համաձայն Միության աշխատանքային պետկոմը արդեն փախստականների կարգավիճակի մասին նախագիծ կազմել ու հանձնել է կառավարությանը, որն էլ իր ներքին հանձնել է ԽՍՀՄ Գերագույն խոր-

հրդրին՝ հարցը քննարկելու համար: Ռուսաստանի Գերագույն խորհրդի վերջին նստաշրջանում նույնպես քարծրացվել է այդ հարցը:

Անժխտելի է մնում այն փաստը, որ որտեղ էլ գտնվեն փախստականները, նրանց իրավունքները վճարակառուցում պաշտպանելու համար այսօր ամենաառաջնահերթ խնդիրը փախստականների կարգավիճակի մասին որոշում ընդունելն է: Հուսանք, որ երկարատև ձգձգումից հետո խորհրդային իշխանությունները, որոնց մեղքով էլ հայտնվեցին փախստականները երկրի մեկ այս, մեկ այն ծագում, վերջապես խիղճ կունենան կայացնելու այդ հույժ կարևոր որոշումն ու տեր կկանգնեն դրա իրականացմանը:

Կարծում են, ավելորդ մեկնաբանությունների կարիք չկա: Ցուրաբանչյուրը թող ահի իր եզրակացությունը: Սակայն ուզում են մի բան շեշտել. շատ էր զգացվում բարոյական աջակցության պակասը: Լավ կլինի, որ փախստականների հարցով ըզբաղվող Հայաստանի կոմիտեն պարբերաբար ներկայացուցիչներ ուղարկեր այնտեղ նրանց վիճակին եւ ծանոթանալու համար:

Ուզում են դիմել նաև փախստականներին. ամբողջ երկրում տիրող այսօրվա ծանր ու լարված իրավիճակում, երբ մարդ իր սեփական տանն անգամ ապահովություն չունի, բացառված չէ, որ հայ փախստականների հետք սկսի նաև երկրի այլ շերտերից: Ուստի նրանց համար միակ ճշգրիտ լուծումը կլինի իրենց բախտը կապել հայրենիքին՝ ինչպիսին էլ այն լինի: Ը


ՋԵՄՄԱ ՄՈՒՐԱԳԱՆՆ

Յուլի 1989

Կրասնովոդսկի Նավահանգիստ



Նոյեմբեր 7, 1990, Մոսկվա  
փախստականները Կարմիր հրապարակի մատույցներում



# ՀԱՐՑԱԶՐՈՅՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ ԵՍԱՅԻ ՍՏԵՓԱՆԵԱՆԻ ՀԵՏ

**ՀԱՐՑՈՒՄ.** - Հայաստանի Հանրապետությունը որոշեց չմասնակցել Մարտ 17-ի հանրաքվեին: Եթե սովետական ժողովուրդներու մեծամասնությունը քուեարկած միությունական նոր դաշնագրի օգտին, ի՞նչ պիտի ըլլայ Հայաստանի դիրքորոշումը:

**ՊԱՏԱՍԽԱՆ.** - Նախ և առաջ, Հայաստանը այդ հարցում ինքնուրույն դիրքորոշում ունի: Սովետական Միության սահմանադրությանը, իրաւունք ունենալով անցկացնել մեր հանրաքուէն, եթէ պահպանուին համապատասխան ձեւակաւութիւնները: Այսինքն, Գերագոյն խորհուրդը երբ որոշի, դրանից յետոյ կը սպասուեն համապատասխան ժամկէտները՝ 6 եւ 9 ամիս եւ ապա կ'անցկացնենք հանրաքուէ: Դա է մեր դիրքորոշումը այդ հարցում:

**Հ.** - Այսուհանդերձ, եթէ մեծամասնությունը որոշեց Վորքայոյի ծրագիրը, իսկ այդ ծրագրիին համաձայն չգտնուի Հայաստանը, ի՞նչ պիտի ըլլայ Հայաստանի կեցուածքը:

**Պ.** - Ես դժուարանում եմ հիմա այդպիսի ենթադրութիւն անել: Ես կարող եմ տուեալ պահից ելնելով միայն ասել թէ հիմա ինչ իրաւունքներ ունի Հայաստանը այս թույլին, այս պահին: Այս պահին, նորից ես կրկնում եմ, մենք սահմանադրութեան շրջանակներում, Սովետական Միութեան իսկ ընդունած սահմանադրութեան շրջանակներում (եթէ դա Գերագոյն խորհուրդը ընդունի, համապատասխան ցանկութիւնը լինի), կարող է անցկացնել հանրաքուէ: մեա՛յ Սովետական Միութիւնում, կամ չմնալ: Եւ յետագայում, ինչպէս գիտեք, ժամկէտ կայ 5 տարուան ընթացքում այդ բոլոր հարցերը հերթականութեամբ լուծելու եւ կամ կը մնայ, կամ չի մնար, եթէ այդ ամբողջ ճանապարհը անցնի: Իմ կարծիքով, անձնական, ոչ որպէս ճախարար, եղպէս էլ կը առաջուի:

**Հ.** - Հայաստանի չմասնակցելու որոշումը գլխաւոր ի՞նչ դրոյապատճառներէ առաջնորդուած է:

**Պ.** - Նախ և առաջ, առաջինը՝ դա Հանրապետութեան Գերագոյն խորհրդի ընդունած հռչակագրի ընթացքն է: Այսինքն, հռչակագրի հիման վրայ մենք մեր ընթացակարգը ունենք, ինչպէս ենք շարժուում անկախութեան ճանապարհին: Այնպէս որ, այս թույլին մեզ սասնակցելու-չմասնակցելու, կամ իմանալ կարծիքը, որն էլ նշանակութիւն չունի: Բաղաբալան որն էլ արժէք չունի Հայաստանի համար այդ հանրաքուէն:

**Հ.** - Հայաստանի Գերագոյն խորհուրդը որոշեց վերաբանալ «Նախիրիտ»ը: Այս որոշումը արդեօք արդի՞նքն էր գիտական ուսումնասիրութիւններու, թէ ճնշման տակ Մտակուայի:

**Պ.** - Նախ ասեմ, որ «Նախիրիտ»ը վերաբանալը միայն Հայաստանի կառավարութեան եւ ժողովրդի ներքին գործն է:

Ինչպէս գիտեք, շատ անելի կարեւոր հարցեր կան, որոնց վրայ Մտակուան ճնշում չի կարող բանցնել: Իսկ ու՛ր մնաց, մի գործարան քանա՛յ թէ չքանալ: Խօսքը գնում է հետեւեալի մասին. ճախ կատարուեցին մանրամասն ուսումնասիրութիւններ, բազմաթիւ յանձնաժողովներ են կազմուել, որոնք տարբեր կողմերից նայել են, թէ ինչքան վնասարեք է այդ արտադրութիւնը: Պարզուեց որ աշխարհում, տարբեր քաղաքներում, այդ տեխնոլոգիայով գործում են քաւական յաջող գործարաններ, նոյնիսկ մօտ լինելով մեծ քաղաքներին, նոյնիսկ մի տեղ, Եւրոպայում, հանգստեան մի քաղաքի մօտ:

Հարցը հետեւեալն է. «Նախիրիտ»ի արտադրանքը եւ ընդհանրապէս «Նախիրիտ»ի գործելը շատ կարեւոր դեր ունի Հայաստանի տնտեսութեան համար: Այնպիսի մի երկիր, ինչպիսին Հայաստանն է, այսօր իրաւունք չունի այդպիսի մեծ շաքարաբլան անելու: Եւ ամէն մի քան պէտք է դա հասկանայ: Երբ որ քաղաքական շարժումը դն էր «Նախիրիտ»ի քացման, դե՛մ էր այն իմաստով, որ «Նախիրիտ»ը մերը չէր, որպէս գաղութային երկրի մի գործարան, այն, պէտք է փակուէր: Բայց որպէս հանրապետութեան գործարան, պէտք է աշխատի:

**Հ.** - Դուք հանդիպում ունեցաք թուրք լրագրող Ալի Բիրանդի հետ և՛ մեր արտապայտութիւնները որոշ քրե-նադատութեան արժանացան արտասահմանի մէջ: Կրճա՞ք ըսել, թէ ի՞նչ էր մեր խօսակցութեան ընդհանուր թեման:

**Պ.** - Թուրք թղթակիցը եկել էր Հայաստան հարցազրոյց անելու եւ կառավարութիւնը նպատակաշարժար գտաւ, որ ես տամ այդ հարցազրոյցը: Ես տուեցի եւ ամէն ինչ տպուած է մտնուում, որն էլ քան անկացնել իմաստ չունի:

**Հ.** - Եթէ թրքական կառավարութիւնը քաղաքական գիշումներ պահանջէ առեւտրական շարքերութիւններ մշակելէ առաջ, Հայաստանի կեցուածքը ի՞նչ պիտի ըլլայ:

**Պ.** - Նախ, որն էլ շարքերութիւն չկայ, որպէսզի խօսինք քաղաքական գիշումների մասին: Մենք պէտք է յստակ հասկանանք, որ մենք դեռ ազգ ենք, ազգային մակարդակից դուրս չենք եկել: Եկէք դառնանք պետութիւն: Երբ որ խօսքը գնայ գիշումների, փոխգիշումների, շարքերութիւնների մասին, այն ժամանակ այս հարցը շատ անելի ճիշդ պատասխան կ'ունենայ: Այսօրայս վիճակով, այդպիսի հարց չկայ ընդհանրապէս:


**Հ.** - Հայաստանի Հանրապետութեան Թուրքիոյ հետ առեւտրական կապեր հաստատելու ցանկութիւնը ակնյայտ է: Արդեօք մե՞նք նախաձեռնութիւն մը առնուա՞մ է մեր միւս հարեւանին, Իրանի ուղղութեամբ:

**Պ.** - Այստեղ նորից մի սխալ հասկացո-

ղութիւն կայ: Մենք Թուրքիայի հետ առեւտրական շարքերութիւններ հաստատելու այդպիսի յատուկ նպատակ չունենք:

Ինչպէս գիտեք, նոր կառավարութեան հիմնական քաղաքականութիւնը կայանում է հետեւեալում. ունենալ լաւ շարքերութիւններ իր շրջա հարեւանների հետ՝ առաջին հերթին, այնուհետեւ աշխարհի բոլոր երկրների հետ: Սա հիմնական գիծն է մեր քաղաքականութեան: Այդ հիմնական գծի շրջանակներում է, որ եղել է իմ հարցազրոյցի բովանդակութիւնը:

**Հ.** - Հայաստանի տնտեսական դժուարին կացութեանց դուրս գալու համար, ինչպէս նաեւ շրջանցելու ազերիական շրջափակումը, կը խօսուի Կրաստանի վրայով քնական գազ ըստանալու մասին: Ըստ երեւոյթին, տասնեակ մը քիլոմէթր գազատար



խողովակ պէտք է գտնուել, քայց այդ եւս դժուարութիւններու կը հանդիպի: Ի՞նչ են այդ դժուարութիւնները: Կրճա՞ք լուսարձակութիւններ տալ:

**Պ.** - Ես էլ հարցին դժուարանում եմ պատասխանել այն ընտանով, որ՝ մի ցուցէ Հրանտ Բազումեանը կ'ասի: Գիտեմ որ այդ գազամուղը կառուցուում է եւ երեւի, ինչ որ դժուարութիւններ կան ինչպէս ամէն մի գործի մէջ:

**Հ.** - Կը կարծէ՞ք որ Հայաստան տնտեսական ինքնուրույնութիւն կ'ունենայ եթէ մնայ Սովետական Միութեան վերահորոգ կազմին մէջ: Որն է երաշխիք կա՞յ որ Հայաստան ունենայ տնտեսական իր անկախութիւնը:

**Պ.** - Այո, մենք աշխատում ենք, որ Հայաստանը ունենայ իր տնտեսական ինքնուրույնութիւնը:

**Հ.** - Կեղծուող իշխանութիւնը ըստ երեւոյթին կ'ուզէ վերադառնալ ճախին կեղծուողացեալ դրութեան...

**Պ.** - Այսինքն, դուք ակնարկում եք, որ

կեղծուող բոլոր չի տայ, որ մենք անկախ, տնտեսական քաղաքականութիւն ունենանք...  
**Հ.** - Դեպքերու ընթացքը այդպէս կը յուշէ մեզի...

**Պ.** - Մեզ այդպէս չի երեւում վիճակը առայժմ: Բազմաթիւ անգամ այս հարցը տուեցին թէ արդեօ՞ք երկիրը չի գնում դեպի մեակցիա: Պէտք է ասել, որ այսօրուան զարգացումները շատ բարդ են եւ այդ պարզ, այսպէս ասած, սիւնման, խտտացում-թուլացում չի աշխատում: Երբեմն, նոյնիսկ ինչ-որ տեղ որոշ խտտացումներ օգտակար են երբ որ երկիրը գնում է դեպի դեմոկրատիա: Պատկերացրէք, օրինակ, յանցագործութիւնների աճը: Շատ անպատասխան Սովետական Միութեան համար, յանցագործութիւնները սկսեցին մեծ չափով աճել, դեմոկրատիայի պայմաններում երեւի թէ եղպէս կը լինի, երբ չունեն ուժեղ ուստիկանութիւն: Եւ ահա այս պայմաններում հարց է բարձրանում, որ ուստիկանութեանը օգնեն զինուորական ուժերը: Սա մեկնաբանում է որպէս խեղդել: Իմ կարծիքով այդպէս չէ: Որոշ դեպքերում, դեմոկրատիայի դեպքում, պէտք է օրէնքների խիստ կիրառում:

**Հ.** - Ձեր կարծիքով, Պարսից Մոցի պատերազմը ինչպիսի՞ ազդեցութիւն կրնայ ունենալ Հայաստանի եւ Մերձատր Արեւելքի հայ գաղթօճախների վրայ:

**Պ.** - Բացառական ամենամեծ ազդեցութիւն կարող է ունենալ: Մենք շատ փախուում ենք, որ վերջին 20-30 տարիներից, սկսած Կիպրոսից, Լիբանանից, Պարսկաստանից, Իրաքից, բոլոր այդ հիմնական պատերազմները, խառնակութիւնները տեղի ունեցան այն շրջանում, որտեղ մենք ունենք ծաղկուն հայկական գաղութներ: Մեզ համար դա մեծ ողբերգութիւն է:

Ես ինքս, գլխատրութեամբ մեր վարչապետի, այդ բուերին առաջիններից մէկն ենք եղել, որ հանգանակութիւն ենք արել Բէյրութի դեպքերից տուժածների համար: Դա քաջասիկ երեւոյթ էր Հայաստանի պայմաններում: Երեսներ առաջին անգամ իր օգնութիւնը ցուց տուեց սփիւթի իր եղբայրներին:

Շատ ցատում եմ, մանաւանդ Իրաքի գաղութի համար. անձամբ ճանաչում եմ շատ մարդկանց եւ չգիտեմ որանք ճակատագիրը հիմա: Դա ինձ շատ ցաւ է պատճառում: Ցույսով եմ, Աստուած մեծ է, որ ամէն ինչ այնտեղ բարեկարգ կը վերջանայ եւ մենք վերջապէս կը պրծնենք, ինչպէս մենք ենք ասում, այն ընթացքից, որոնք անկայտնութիւն են ստեղծում այդ շրջաններում:

**Հ.** - Հայաստանի եւ արտասահմանի որոշ կազմակերպութիւններ կ'ամբաստանեն Հայաստանի իշխանութիւնները, այսինքն Հայոց Համագային Շարժման ղեկավարները, որպէս թէ անոնք իրենց նկատմամբ կը վարեն այն քաղաքականութիւնը, ինչ քաղաքականութիւնը որ կը վարէին ճախին իշխանութիւնները: Ի՞նչ է մեր կարծիքը:

**Պ.** - Այդ հարցին չեմ կարող պատասխանել, որովհետեւ ես ՀՀԸ-ի անդամ չեմ:

Հարցազրոյցը վարեց ՅԱԿՈՐ ՊՕՂՈՍԵԱՆ

## ՎԵՐԱԴԱՐՉԸ ԴԵՊԻ ՊԱՐԵՆՄԱՍՆԱՏՐՈՒՄ ԳՐԵԹԵ ԱՆԽՈՒՍԱՓԵԼԻ Է

ՎԱՐՅԱՆԻ ԳՐԻՇՅԵԼԿԱՆ, տնտեսագետ

Մեր բոլոր տնտեսական ընթացքները, այդ թվում եւ գյուղում, դեմ կանգնել խորհրդակցութիւնների ու հենց այդ պատճառով էլ կծախողվեն:

Վեարձում են մարզից մարզ պարենի մատակարարումները, գյուղատնտեսության մեջ ընկնում է պետաաջարկների կատարման տուկոսը: Եւ դա քնական է, քանի որ վերացան նոյնիսկ աշխատանքի նկատմամբ նախկին խթանումները: Ազդարային սեկտորը գերհագեցած է փողով, որը բանի պետք չէ. նոր գներ առաջարկեցին, բոլոր պարտքերը մարեցին, էլ հանուն ինչի՞ աշխատեց: Հնարավոր չէ փողերի այդ կույտով սեւալ սեւուրներ ստանալ:

Այնինչ իրադրութիւնն այնքան լարված է, որ նույնիսկ մատակարարումների անընթաց անկումը լրջորեն խախտում է պարենային մատակարարումը: Սակայն, եթե ֆինանսական լծակները արդեն չեն գործում, իսկ քաղաքներին մատակարարելու համեմայն դեպս պետք է, որնմն մենք գործակալում անխուսափելիորեն վերադառնում ենք նախկին վարչական միջոցներին՝ գյուղատնտես-

ութեանը ստիպել պարեն մատակարարել: Նման քաղաքականութեամբ հնարավոր չէ հիմնել ֆերմերների եւ գյուղատնտեսականների վրա, սրանք էլ հազիվ թէ կարողանան աշխատել այդ պայմաններում: Ուրեմն, ամբողջ հույսը պետք է դրվի կոլտնտեսների ու տոլտնտեսների վրա, որոնք ըստ էության ստեղծվել էին հենց պարենմատակարարման քաղաքականութեանց ներքինում:

Եթե մինչ այսօր հողային ընթացքների գործընթացը մի կերպ էր ընթանում՝ օրինակաբար, դրանց անկատարելությունը, գաղափարական դրձումները, ապարտի դիմադրությունն են այն բաների պատճառով, այսպէս այժմ եթե փորձենք կանխել գալիք աշնան «հացամբերման ճգնաժամը», այն անհասարակ կծախողենք: Նման մտեցման դեպքում այն միայն խանգարում է: Այսինքն ցուցադրական խաղեր խաղալ, թէ իբր աշակցում ենք «ազատ երկրագործների», դեռ կարող է շարունակվել, քայց ոչ ավելին: Կարծում եմ, որ արդեն զարմանալից ցանքսի ժամանակ ճնշում կգործադրվի տնտեսությունների վրա, փորձելով աշնանը

որն էլ արդյունք երաշխավորել: Ընդհանուր առմամբ, սպասվում է պնդողական ձգում կիրառելով ավանդական միջոցները, մասնավորապէս կուսակցական վերահսկողությունը, ինչն առայժմ դեռ հնարավոր է վերակենդանացնել:

Հնարավոր է, որ այդ ճանապարհով հաջողվի ինչ-որ քան պահել կամ բոլոր շտապ գյուղատնտեսության սուր անկումը համեմատած 1990 թվականի հետ, քանզի դեռ պահպանվել են անցյալ տարվա բերքի պաշարները: Բայց դա միայն մտտիկ հեռանկար է: Փաստորեն խափանելով հողային կամ, լայն առումով՝ ազդարային ընթացքը, մենք ինքներս կտրուկ անկում ենք նախապատրաստում հետագայում: Էկոնոմիկան չի կարող այլեւս գյուղատնտեսությանն առաջարկել հավելյալ սեւուրներ: Այնինչ ազդարայնութեանը շարունակվում է: Նույնիսկ արտադրության նախկին մատակարարի վրա մնալու համար պետք է այդ Մոլոքին առաջարկել ու առաջարկել:

Եթե չնեանանք հին մեխանիզմից (իսկ ազդարային ընթացքը ըստ էության նախատեսված էր այդ քանի համար) եւ վերադառնանք պարենմատակարարման քաղաքականութեանը, անխուսափելիորեն մեզ կմտնենք այդպիսի ծանր վիճակի:

«Մտխոյակի ճակատ», թիվ 10

## Վ. Ի. ԸՉԵՐԲԱԿՈՎ. «ԳՆԵՐԻ ԲԱՐՉԱՅՄԱՆ ԱԼԻԲԸ ԿԵՆՏՐՈՆԱԿՎԻ ԴԵՆ ԵՐԿՈՒ-ԵՐԵՔ ՏԱՐԻ...»

Օրերս Սովետական անկախվելիս համալուրեւական գիտագործակալական կոնֆերանս «Անուում դեպի շուկա, ստրատեգիա եւ տակտիկա» նշանաբանով: Գիտաժողովին ելույթ ունեցավ ԽՄԸ Վարչապետի տեղակալ Վ. Ի. Ըչերբակովը: Նա մասնավորապէս նշեց, թէ քանի որ կառավարութիւնը պարպապէս ֆինանսական հետադարձութեան շուկայի տնտեսական մեթոդաբանութեան աշխատողներին 60 տուրքի փոխառու կամ վճարել, սրանք իրենք պետք է այն վատակեն՝ բարձրակարգ իրենց ապրուստեղի պայմանագրային գները:

«Միակզմայն ակնհայտ է, որ դա կհարուցի գների աճի սր պիք», - ընդօժեւ է ըչերբակովը. - սակայն, ըստ մեր կանխագուշակումների, վիճակը երկու-երեք տարուց կկայտնանալ:

Առաջիկա օրերում ես մեկ հետաքրքրական առանձնահատկութեան հասարակական կազմակերպութեան ներքին ապարտի աշխատողներին բյուջեի հաշվին փոխառու կամ չի լինի: Կուստնտեսականների փոխառու կամ հարցը ընկալման փուլում է գտնուում:

«Կոմունիստական պրակտիկ», մարտ 22

Դեռևս Մոսկի պատերազմի ամենաթեմ օրերին, շրջանի իրադարձություններին ուշի-ուշով հետևող քաղաքական տեսարանները, նկատելով Իրանի բավականին ճկուն քաղաքականությունը, հանգել էին այն եզրակացության, որ Իրանի իշխանությունները հանդես գալով կոնֆլիկտը կարգավորող խաղաղասիրական առաջարկներով՝ փորձում էին երկխոսության մեջ մտնել ԱՄՆ-ի հետ ևս դուրս գալ քաղաքական մեկուսացումից:

Այսպիսով, «ոչ դեպի արձնելը, ոչ դե-

և Իրանի միջև ստեղծվելիք հարաբերությունների համար (ինչպես վկայում է Իրանի արտգործնախարարության տեսակետն արտահայտող «Թեմրան քայն» պաշտոնաթերթը) կան նախադրյալներ: Անգլիան Լոնդոնում ձեռքարկված իրանցի Մեծղղաղ Բոքյաթինը ներում է շնորհել, հույս ունենալով ազատել Իրանում ձերբակալված անգլիացի վաճառական Բոքյաթինը:

Իրանի և Եգիպտոսի միջև 12 տարի առաջ եգիպտահարայնված հաշտության պայմանագրի կնքումից հետո ընդհատված դիվանագիտական կապերը վերսկսելու հա-

Դ ԱՄՍԱԿՈՍ, (Ռոյթեր) - երկար ժամանակ անտեսված արևմտյան երկրների կողմից, որոնք նրան համարում էին պոթենցիալ ծայրահեղականության կենտրոն, Սիրիան այժմ քաղաքական և Պարսից ծոցի տագնապի առիթով հակաիրաքյան կողմից այն իր մասնակցության արդյունքները:

«Երկար ժամանակ մեկուսացված լինելուց հետո, Սիրիան վերագտել է իր հեղինակությունն ու հնաձեռն», ասում է Գամասկոսում հավատարմագրված օտար դիվանագետներից մեկը, ապա շարունակում. «Սիրիացիները դարձյալ գտնվում են քաղաքական բնաճախարակի կենտրոնում. նրանք ապացուցեցին, որ իրենց երկիրը կարևոր է»:

Մ. Նահանգների պետքարտուղար Ջեյմս Բեյքերի մարտի 13-ի այցը վերջինն էր կարևոր երկրների ներկայացուցիչների դեպի Գամասկոս կատարած շրջերթի, որի նպատակն էր Մոսկի անվտանգության և արաբ-իսրայելյան կնճռի քննարկումը:

Այդ 18 այցելուների մեջ առանձնանում էր նաև Անգլիո արտգործ նախարարության թիվ երկրորդ մարդը՝ Դուգլաս Հոգգը, որը Բրիտանիայի առաջին պաշտոնատարն էր, որ Լոնդոն-Գամասկոս դիվանագիտական կապերի քառամյա խզումից հետո այցելում էր այնտեղ:

«Երկար ժամանակ Սիրիան նկատվում էր Արևելքի մերժվածը», քաջատրում է մի դիվանագետ: «Իսկ այժմ պատվիրակները հերթ են պահում Գամասկոս այցելելու համար»:

Նախագահ Հաֆեզ Ասադի համար, որի 20 հազար զինվորները մաս էին կազմել հակաիրաքյան կողմից այնու, Մոսկի պատե-

ցիայի մաս կազմող, քանի որ այն արաբների այբում ավելի մեծ կշիռ կտար իր քաղաքականությանը շրջանում:

«Սիրիայի նեցուկը վայելելը շատ կարևոր և օգտակար էր Մ. Նահանգների համար, քանի որ նրա արաբ մյուս դաշնակիցները՝ Եգիպտոսը, Մաուրյան Արաբիան ու մյուսները ի սկզբանե պրոամերիկյան էին», ընդգծում է դիվանագետը:

Այսուհանդերձ, դաշնակիցների կողքին դիրքորոշվելը անվտանգ չէր Հաֆեզ Ասադի համար: Նա կարող էր իր վրա հրավել արաբական արմատական երկրների քննադատությունը «ամերիկյան իմպերիալիստների» կողմը թեքվելու առթիվ:

Սակայն ամերիկացիները շարժվեցին առաջ: Ջեյմս Բեյքերի երկու այցը Գամասկոս քաղաքային վերջինի շրջանային կարևորությունը: Բացի այդ, Վաշինգտոնը նախապես արդեն իր օրհնությունն էր տվել զենքային Միջին Արևելքում անցյալ հոկտեմբերին լիբանանյան ապստամբից դուրս քաշելու գործում սիրիա-լիբանանյան նախաձեռնությանը:

Երևույթական համայնքի երկրները, որոնք

## ԻՐԱՆԸ ԴՈՒՐՍ Է ԳԱԼԻՍ ՄԵԿՈՒՄԱՑՈՒՄԻՑ

### ԳՐԻԳՈՐ ԱՆՈՒՔԵԼՅԱՆ

պի արևմուտք» քաղաքականությունը որդեգրած Իրանը այժմ ձգտում է հարաբերությունների մեջ մտնել թե՛ արևելքի, և թե՛ արևմուտքի հետ: Նման ձգտումների համար կան օրյելկոսիվ պատճառներ: Իրանի իսլամական իշխանություններն արդեն չեն քաջցնում երկրի սոցիալ-տնտեսական հետամնացության պատճառները: Իրան-իրաքյան արդևտարեր պատերազմը ևս դրան նախորդող հեղափոխությունը քայքայել են երկրի տնտեսությունը: Իսկ 9 ամիս առաջ տեղի ունեցած կործանարար երկրաշարժը էլ ավելի ծանր կացության մեջ դրեց երկրի դեկավարներին: Ներկայումս պատերազմի ընթացքում վնասված նավթարդյունաբերական ձեռնարկությունների վերականգնման ուղղությամբ Իրանում լուրջ քայլեր են արվում, ստեղծվում են նոր հեղափոխություններ: Սակայն Իրանը, գիտակցելով, որ միայն ներքին կարողություններով չի կարող դուրս գալ այդ ծանր կացությունից, մտադրվել է հարաբերությունների մեջ մտնել աշխարհի տարբեր երկրների հետ:

Այդ է վկայում ԱՄՆ-ի հետ Իրանի որոշակի հարաբերությունների վերսկսումը, որն արդեն տվել է իր նյութական արդյունքը Իրանի երկրաշարժից տուժած շրջանների վերականգնման համար: Միջազգային դրամատուր, որը գտնվում է ԱՄՆ-ի կառավարության ազդեցության տակ, հաստատել է Իրանին հատկացվելիք 250 միլիոն դոլարի վարկ:

Իրանը Ֆրանսիայի հետ դեսպանների մակարդակով դիվանագիտական հարաբերություններ է վերահաստատել: Անգլիայի

մար, երկու երկրների մայրաքաղաքներում կվերաբացվեն ներկայացուցչություններ («չափերի կաշտպանության առյաններ»): Մարտի 20-ին եգիպտական «Ալ-ախբար»



թերթը այս առիթով հրապարակել է Հուսեյն Մուսարաֆի ուղերձը Հաշեմի Ռաֆսանջանիին:

Դեռևս մեկուկես ամիս առաջ Իրանն ու Հորդանանը վերաբացելով երկու երկրների մայրաքաղաքներում իրենց դեսպանատները, վերահաստատել են դիվանագիտական կապերը:

Եւ ահա, մարտի 20-ին, Իրանը և Մաուրյան Արաբիան պաշտոնապես հայտարարեցին դիվանագիտական հարաբերությունների վերականգնման մասին: Երկու երկրներին կողմից հրապարակված համատեղ պաշտոնական կառավարական հաղորդագրություններում նշված է, որ մարտի 26-ից դիվանագիտական հարաբերություններ են վերսկսվում Իրանի և Մաուրյան Արաբիայի միջև: □

## ՍԻՐԻԱՆ ԻՐ ՏԵՂՆ Է ԳՐԱՎՈՒՄ ՄԵՐՋԱՎՈՐ ԱՐԵՒԵԼԵՒ ԔԱՂԱՔԱԿԱՆ ԱՍՊԱՐԵԶՈՒՄ

րազմը առիթ էր ոչ միայն իր հին մրցակցի՝ Սաղոման Հուսեյնի դեմ պայքարելու, այլև մի հրաշալի պատմություն՝ դուրս գալու մեկուսացումից և վերահաստատելու իր ազդեցությունը Մերձավոր Արևելքում: «Հաֆեզ Ասադն ստացավ այն, ինչին ձեռք տուր էր. ճանաչում, հեղինակություն և դրամ իր երկրի համար», հայտարարում է մի լոբիստ: ճիշտապես:

Իրաքի կողմից Բուվեյքի զավթումից՝ 1990 օգոստոսի 2-ից առաջ Գամասկոսը տառու էր հակաամերիկյան ու ծայրահեղական գիծ: Սակայն Մ. Նահանգներն ուզում էր, որ Սիրիան հակաիրաքյան կողմի-

դեռ մտիկ անցյալում մեղադրում էին Սիրիային միջազգային ահաբեկությունը քաշելու և հանցանքով, իրենց հերթին արդեն վերցրել են այդ երկրին տրվող վարկերի սառեցման որոշումը: Արաբական հարուստ երկրներն սկսել են դրան տրամադրել Սիրիային:

Սակայն Գամասկոսը դեռևս չի քավարաթյուն աչաքանով: Բացի Իսրայելի հետ իր և արաբական այլ երկրների ունեցած վեճը արդարորեն լուծելու ակնկալությունից, նա Վաշինգտոնից պահանջում է ջնջել իր անունը միջազգային ահաբեկությունը քաշելու երկրների ցուցակից: □

### ՄԱՐՋԱԿԱՆ

## Հայաստանը չպետք է տնտեսական հարաբերություններ հաստատի...

չարունակություն 4-րդ էջից

«Երկրորդն այն է, որ նախագահ Տեր-Պետրոսյանը հատկորեն նշում է Թուրքիայի հետ բնականոն հարաբերություն հաստատելու հայտնի դիրքորոշումը: Նա ասում է. «Վերջապես ժամանակն է, որ հայերն ու թուրքերը մի կողմ թողնեն 75 տարվա իրենց դաճնությունները»:

Գունգրեսական Մուդիհն ավարտում է իր շրջաբերականը պնդելով, որ իր գործընկերներն անպայմանորեն «թղթապանակում պահեն այդ նամակը հետագայում վկայակոչելու նպատակով՝ այն դեպքում, երբ դարձյալ այդ երկպառակիչ և անիմոն հայկական բանաձևեր ներկայացուցչական պալատում քննարկման ներկայացվի»:

Ցեղասպանության բանաձևի դեմ միավորներ հավաքելու իր փութաբանության մեջ Մուդիհն, այնուամենայնիվ, անզուգորեն քաջահայտում է առեւտուրը քաղաքական նպատակներով օգտագործելու Թուրքիայի և նրա հովանավորողների ծրագրերը:

Միանալ Թուրքիայի այդ խաղին՝ նշանակելու է միանգամ ընդմիշտ հրաժարվել ամբողջ աշխարհով մեկ հայերի 75 տարիների ընթացքում մղած պայքարից ևս դրանով իսկ ազատել Թուրքիային իր ամբողջ անցյալի հետ առեւտրային պարտավորությունից:

Այնպես որ՝ նախքան այդ անըրջելի քայլին դիմելը ազգային լուրջ բանավեճ է անհրաժեշտ ծավալել, մանրագին քննարկելու համար այդպիսի քաղաքականության

հեռանաբ հետևանքները: Ինչքան մեզ հայտնի է, հայկական խորհրդարանը այդ հարցը չի էլ քննարկել դեռևս:

Սրանով մեք բոլորովին էլ չենք ուզում ասել, թե Հայաստանն ու Թուրքիան հավիտյան թշնամի պետք է մնան: Երկու հարևան երկրները պարտավոր են մի օր խաղաղության դաշն կնքել: Սակայն դրա ժամանակը դեռ չի եկել: Ո՛չ թուրքերը, ո՛չ էլ հայերը դրան պատրաստ չեն:

Հայ և թուրք ղեկավարները մի օր, ի վերջո, նստելու են քանակությունների սեղանի շուրջ և մշակելու են, անշուշտ, ընդհանրակ մի համաձայնագիր, որն ընդգրկելու է ոչ միայն տնտեսական, այլ նաև մշակութային և քաղաքական հարաբերությունները:

Սակայն նախ պետք է լուծվեն երկու կողմերի միջև գոյություն ունեցող ամեն տեսակի առկախ հարցերը, ներառյալ ցեղասպանության փաստի ընդունումը Թուրքիայի կողմից, նյութական հատուցումը և ազգրավված հողերի վերադարձը:

Մինչ այդ, առեւտրական հարաբերությունների հաստատումը Թուրքիայի հետ, մեր կարծիքով, վաղաժամ է և անարդյունավետ: Հայաստանի ներկա տնտեսական կարիքները հոգալու համար ավելի նպատակահարմար է հարաբերություններ մշակել և զարգացնել Վրաստանի, Խորհրդային Միության մյուս հանրապետությունների և, իհարկե, հարևան Իրանի հետ: □

## «ՈՒՐԱՐՏՈՒ»Ի ԽԱՂԱՑԱԿԸ ԵԶՐԱԾԱԿԻՉՈՒՄ




Մարզասերներին հետաքրքրում է, թե ի՞նչ մրցակարգով է անկախվելու բաժնետերի տղամարդկանց խՍՀՄ 2-րդ խմբի առաջնության երափակիչ փուլի մրցաշարը, որտեղ խաղարկվելու են առաջին խմբի ուղեգրերը, և ինչպիսիս է «Ուրարտու»ի խաղապակը:

Խմբում հաղթանակ տարած և երափակիչ մտած 8 թիմերը միմյանց հետ 4 տուրով հանդիպելու են երկուական անգամ, ընդ որում յուրաքանչյուր տուրում թիմերը բաժանվելու են երկու քառյակի:


Մարտի 29-ից 31-ը «Ուրարտու» և Խորհրդում մրցելու է Միկոյի-Կիեի գույգի հաղթողի, Լենինգրադի «Ավետախ»-ի և տեղի թիմի հետ: Ապրիլի 11-ից 14-ը «Ուրարտու» և

Մտավորպուրում 2-ական անգամ ուժերը չափելու է տեղի և Բաքվի թիմերի հետ: 3-րդ տուրում, որը կայանալու է Կիևում կամ Միկոյիում, «Ուրարտու» և ապրիլի 26-ից 28-ը տուրի մրցելու է Խարկովում տեղի ունեցած առաջին տուրի մրցակիցների հետ: Եւ վերջապես 4-րդ տուրում, որը մայիսի 9-ից 12-ը անկախվելու է Երևանում, «Ուրարտու»-ի հյուրերը կլինեն Ալմա-Աթայի ԲՍՄ-2 թիմը և Կրասնոյարսկի հավաքականը: Թիմերը միմյանց հետ կմրցեն երկուական անգամ:

Երափակիչ մրցաշարի հաղթողը միանգամից առաջին խմբի ուղեգիր ձեռք կբերի, իսկ 2-րդ և 3-րդ տեղերը գրաված թիմերը կմրցեն համապատասխանաբար 1-ին խմբում նախավերջին և 10-րդ տեղ գրաված թիմերի հետ: Սկզբից 2 հանդիպում տեղի կունենա 1-ին խմբի ներկայացուցչի խաղաիրապարակում: Ասերածեշտության դեպքում կանկապվի նաև 5-րդ հանդիպումը:



Ոչ-որի



Հաղթանակ



### Ասուլիս՝ Երուսաղեմի հայոց պատրիարքի և Եկեղեցական առաջնորդների հետ

Ռամկավար ազատական կուսակցության մամուլի և տեղեկատվության գրասենյակը չորեքշաբթի մարտի 20-ին հետմիջօրեին լրագրողների տանը կազմակերպեց մամուլի ասուլիս Երուսաղեմի հայոց պատրիարք՝ ամենապատիվ Ս. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանի և նրան ընկերակցող շքանշանակիր անդամների՝ Մ. Նահանգների Արևելյան թեմի առաջնորդ Խաթակ Եպս. Պարսաճյանի և Կանադայի Հայոց թեմի առաջնորդ Հովհանն Եպս. Տերտրյանի հետ: Ընթացիկ մաս էր կազմում նաև Ժնևի հայոց հոգևոր հովիվ Վիգեն Վրթ. Այգազյանը:


Պատրիարք հայրը, լուսաբանություններ տվեց Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց միաբանության, արար-խորանայան տաճարի արանքում պատրիարքության վարած ճյուղն քաղաքականության, ինչպես նաև Հայաստանից ներս վերջին շրջանում կատարվող աղանդավորական ներթափանցումների, և Հայ եկեղեցու ծոցում 1956-ից ի վեր շարունակվող երկփեղկումը վերացնելու անհրաժեշտության շուրջ:

Ասուլիսի ընթացքում արծարծված նյութերի մասին ավելի մանրամասն մեր առաջիկա համարում:

### ՀԱՆՐԱՔԿԵ, ԱՄԱՐԱՍ ԵՒ ԳԱՆՋԱՍԱՐ՝ ԱՍԵՐԻԿՅԱՆ CNN ՑԱՆՅՈՎ

Հայկական աշխարհային երկու դիրքորոշումներ անցյալ շաբաթավերջին նյութ դարձան ամերիկյան հանրաճառ Սի.Էն.Էն. (Cable News Network) հեռուստատեսային ցանցի «Համաշխարհային տեղեկատվություն» ծրագրի համար, ամերիկյան ու եվրոպական միլիոնավոր հեռուստատեղիատուների

նույն ծրագրով հեռափոխվեց կիրակի 17 մարտին, Հայկական հեռուստատեսության «Նոր ալիք» խմբագրության կողմից պատրաստված այն ժապավենն էր, որի ընթացքում Ռոբերտ Մավիսակյանը հարցազրույց էր վարում Ամենայն Հայոց Հայրապետ Վազգեն Ա-ի հետ՝ Ամարասի և



David Zenian & Robert Mavisakallian - Armenian TV, Yerevan

առաջ պարզելով Հայաստանի դիրքորոշումը միութենական հանրաքվեի նկատմամբ և Ամարաս ու Գանձասար վանքերի առիթով: Երեւանից ուղղակի տիեզերական հեռակապով, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության Վաչինգտոնի տեղեկատու գրասենյակի տնօրեն Դավիթ Ջենյանը մարտի 15-ին Սի.Էն.Էն. «Համաշխարհային տեղեկատվություն» ծրագրի դուրս եկավ և 3 րոպեի ընթացքում ներկայացրեց այն պատճառները, որոնք անընդունելի էին համարում միութենական հանրաքվեի անցկացումը Հայաստանում, և որոնց հետևանքով հայկական խորհրդարանը որոշել էր առաջիկա սեպտեմբերի 21-ին Հայաստանում անցկացնել առանձին հանրաքվե:

Գանձասարի վանքերի նկատմամբ ազերի իշխանությունների նկրտումների առիթով: Այդ հաղորդմամբ, որի ընթացքում օտար հեռուստատեղիատուները առաջին անգամ ծանոթացան Գանձասարին և Ամարասին, միջազգային ուշադրությանը ներկայացվեց, մի անգամ նաև, Արցախի նկատմամբ Բարձր իշխանությունների զավթողական քաղաքականությունը, այս պարագային՝ հայկական դարավոր այդ վանքերը փակելու ներքին և արևելյանի որոշումը, որի կապակցությամբ Ամենայն Հայոց Հայրապետը նախապես գրավոր ամազանգ էր հեղծեցրել Ավտարիայում գումարվող եկեղեցիների համաշխարհային խորհրդի նստաշրջանում:

Հայաստանից պարբերաբար Սի.Էն.Էն. ին տրվող ռեպորտաժները մտնում են այն հատուկ կարգադրության ծիրից ներս, որը գոյացել է ՀԲԸ Միության Վաչինգտոնի տեղեկատվական գրասենյակի միջնորդությանը, ամերիկյան այդ հեռուստացանցի և Հայկական հեռուստատեսության միջև:

Այդ կարգադրության շնորհիվ կայուն կերպով ապահովվում է Հայաստանի դուրսը համաշխարհային ուշադրության կիզակետ՝ ավելի քան 100 միլիոն հեռուստատեղիատու ունեցող Սի.Էն.Էն.ի միջոցով: Ծ

Հարցազրույցի ձևով տրված հաղորդման ընթացքում Գ. Ջենյանը ընդգծեց հայ ժողովրդի միասնականությունը և նրա ամուր նեցուկը ժամայվարական սկզբունքներով ընտրված իր իշխանության շուրջը: Ջենյանը հերքեց Մոսկվայի կողմից տարածվող այն լուրերը, թե, իբր միութենական հանրաքվեն քայքայելու նպատակով քաղաքացիական պատերազմի պատճառ կարող է դառնալ Հայաստանում:

Երկրորդ հաղորդումը, որ Սի.Էն.Էն.ի

### ՄԻ ՀԱՅ ԸՆՏԱՆԻՔԻ ՀԻՆԳ ԱՆՂԱՄՆԵՐ ԶՈՂ ԵՆ ԳՆՈՒՄ ԻՆՔՆԱՎՈՐՈՒՄ ԴԱՅԹՅՈՒՆԻ

Բեջմութ, 20 մարտ 1991. Լիբանանի Անթիլիաս հայաշատ թաղամասում ինքնաշարժի պայթյունի հետևանքով զոհվել են մի հայ ընտանիքի հինգ անդամները, որոնց ինքնաշարժը գտնվել է պայթուցիկ ինքնաշարժի մոտակայքում:

Պայթյունը կրում էր ահաբեկչական բնույթ և ուղղված էր Լիբանանի փոխվարչապետ և պաշտպանության նախարար Միշել ԱՄՐԻ դեմ, որը գնում էր նախարարների խորհրդի պալատ, մասնակցելու հերթական նիստին, որտեղ քննարկվելու էին Կիսյալ Ջոկատների ամբողջական լուծարքի հարցը: Պայթյունը տեղի է ունեցել փոխվարչապետի այնտեղից անկողնից 2-3 րոպե առաջ, որի հետևանքով զոհվել են 10 և վիրավորվել 33 հոգի. վիրավորների թվում է նաև Միշել ԱՄՐԻ: Լիբանանի Բ. Գաբրիելյանի հռչակումից հետո, սա առաջին խափանարարական գործողությունն է, որը խլում է այդպիսի մեծ թվով զոհեր: Ծ

### ՇՐՋԱՆԻ ԼՈՒՐԵՐ ՇՐՋԱՆԻ ԼՈՒՐԵՐ ՇՐՋԱՆԻ ԼՈՒՐԵՐ ՇՐՋԱՆԻ

Խորհրդային Միություն կատարած պաշտոնական այցի ժամանակ, Թուրքուտ Օզալը հանդիպում ունեցավ Ռուսաստանյան Ֆեդերացիայի Գերագույն խորհրդի նախագահ Բորիս Ելցինի հետ: Սա Մոսկվայում պրեզիդենտական մակարդակով Բորիս Ել-

միայն մարտի 12-ին Մոսկվայում: Նույն օրը Մոսկվայում կայացած մամուլի ասուլիսի ժամանակ Թուրքուտ Օզալը, խոսելով Ելցինի հետ հանդիպման մասին, նշեց. «Հանդիպումը համարում եմ բավականին օգտակար: Բորիս Ելցինին

### ՕԶԱԼ-ԵԼՑԻՆ ՀԱՆԴԻՊՄԱՆ ԸՈՒՐՋ

ցինի առաջին հանդիպումն էր, այն տեղի էր ունենում Գորբաչով-Ելցին հակամարտության ամենաթեժ օրերին:

«Հյուրիյնք» մեզ տեղեկացնում է, որ նախնական ծրագրի համաձայն Օզալը հանդիպելու էր միայն Գորբաչովի հետ: Սակայն, վերջին պահին, այցի ծրագիրը ընդարձակվում է և Օզալ-Ելցին հանդիպումը իրողություն է դառնում: «Հյուրիյնք» քաղաքական մեկնաբան Էրթուրուկ Օզքյոյը նշում է, որ մարտի 4-ին ԽՍՀՄ-ում Թուրքիայի դեսպան Վուրան Վուրալը հեռագրագեց Ռուսաստանյան Ֆեդերացիայի արտգործնախարարին՝ հայտնելով նրան Բորիս Ելցինի հետ հանդիպելու Օզալի ցանկությունը:

«Ելցինը» գրում է Օզքյոյը. «Նշ միայն Խորհրդային Միության խոշորագույն հանրապետության ղեկավարն է, այլևս երկրում Գորբաչովի ամենագործող հակամակրոդր: Գորբաչովից հետո նախապատվությունը արտաքին աշխարհում նրան են տալիս»: Պարզվում է, Ելցինի հետ հանդիպելու Օզալի նախաձեռնությունը նոր չէ: Թուրքիայի պրեզիդենտը, դեռ փետրվարի վերջերին կայացած դավաճան հանդիպման ժամանակ մտադիր էր տեսակցություն ունենալ Ելցինի հետ, նախօրոք իմանալով, որ վերջինս ժամանելու է Դավոս: Սակայն, Պարսից ծոցի պատերազմի պատճառով Օզալը չի կարողանում Դավոս գնալ, Ելցինը նմանապես: Նրանց հանդիպումը կայանում է

հայտնեցինք, որ Թուրքիան ոչ միայն մեծ կարևորություն է տալիս խորհրդա-բուրջական հարաբերությունների զարգացմանը, այլևս ցանկանում է ուղղակի կապեր հաստատել միութենական հանրապետությունների հետ»: Իսկ մարտի 13-ին, Բորիս Ելցինը իր հերթին ընդունելով մամուլի ներկայացուցիչներին, նախ նշեց, որ Օզալի այցը Մոսկվա նշանակվում է 1921 թվականի մարտի 16-ի խորհրդա-բուրջական պայմանագրի 70 ամյակով, ապա անդրադարձավ հանդիպմանը հայտարարելով, թե. «Սա Թուրքիայի և Ռուսաստանյան Ֆեդերացիայի միջև ուղղակի կապեր հաստատելու կարևոր քայլ է, և ինքը գոհունակությամբ է ընդունել Անկարա այցելելու Թուրքուտ Օզալի հրավերը»:

Ուշագրավն այն էր, որ Օզալը մի կողմից Գորբաչովի հետ, 20 տարի ժամկետով «բարեկամության, բարիդրացիական հարաբերությունների և համագործակցության» պայմանագիր էր կնքում, չույց տալով աշխարհին, թե ինքը յուր չի ընդունում Խորհրդային Միության փլուզման վերաբերյալ խոսակցությունները, մյուս կողմից նա, ինչպես միութենական այլ հանրապետությունների ղեկավարների, այնպես էլ Բորիս Ելցինի հետ ուղղակի կապեր էր հաստատում և վերջինիս պաշտոնապես հրավիրում Անկարա:

Մեր մեկնաբան ՀԱԿՈՐ ՉԱՔՐՅԱՆ

### ԻՐԱՔԻ ԾԻԱ ՀՈԳԵԻՈՐ ԱՌԱՋՆՈՐԴԸ ԶԵՐԲԱԿԱԼՎԱԾ

Իրանը խիստ բողոք է ներկայացրել Իրաքին համայն շիա մահմեդականների հոգևոր առաջնորդ Այաթոլլահ Արուղասան Խոյի նկատմամբ ցուցաբերած կոպիտ վերաբերմունքի համար: Իրանի ռադիոն ծանուցում է, որ Այաթոլլահ Խոյին մի խումբ հոգևորականների հետ Իրաքի Նաջաֆ քաղաքում ձերբակալվել և թեմի ուժով ուղղաթիռով Բաղդադ է տեղափոխվել:

Բաղդադի հեռուստատեսությունը պատկերափոխել է մի տեսաժապավեն, որտեղ Սադդամ Հուսեյնն ու Այաթոլլահ Խոյին կողք-կողքի կանգնած են եղել: Իննսուսն անց քարծրաստիճան հոգևորականը, ըստ այդ հեռուստատեսային ժապավենի, դատապարտել է շիա մահմեդականներին երկրի հարավային շրջաններում ծավալած ապստամբությունների համար: Այաթոլլահ Խոյի հետևորդները վրդովված հայտնում են, որ այդ հեռուստատեսային ցուցադրումը լույս ներկայացնում է եղել, և զառամյալ հոգևորականը ճնշման տակ է նման մեղադրանքներ ուղղել ապստամբներին:

Մարտի 20-ին Բաղդադի հեռուստատեսությամբ եթեր արձակված հաղորդման մեջ Այաթոլլահ Խոյին դողդոջուն ծայրով իբր դրվատանքի է արժանացրել Սադդամին, և սաստիճ փաթեթ է տվել, որ ղեկավարությունը կարողացել է ճնշել ապստամբությունը:

և իբր Խոյին ապստամբներին նույնպես անվանելով, դժգոհել է, որ նրանք ոչնչացրել են իր երկու տվտոմքեմաները: Հոգևորականի դիմաց կանգնած. Սադդամը խոսելով Իրաքի հարավային շրջաններում բռնկված խռովությունների մասին, հարցրել է Այաթոլլահ Խոյին, թե արդյոք նման արարքներ թույլատրելի են իսլամին հարող մարդկանց: Հոգևորականը պատասխանել է. «Ի՞նչ կրոնի մասին կարող է խոսք լինել: Արդյոք կա՞ այնպիսի մի կրոն, որը թույլ տա թալանի ենթարկել մարդկանց»: Այնուհետև Այաթոլլահ Խոյին Սադդամից պահանջել է, որ այն մարդկանց հետ, ովքեր նվազ մասնակցություն ունեն խռովություններում, ավելի մեղմ վերաբերվի: Վերջում Այաթոլլահ Խոյի որդին՝ Մոհամմադ Թաշին, հոր անունից կարողացել է մի հայտարարություն:

Այաթոլլահ Խոյի նկատմամբ ճնշում գործադրելու մասին է վկայում նրա ներկայացուցիչ Միլանին, որը նույնպես պնդում է, թե հեռուստատեսային հաղորդումից պարզ գզացվում էր, որ Այաթոլլահ Խոյին կաշկանդված և ճնշված վիճակում է զրտնրում: Սադդամ Հուսեյնը, ավելացնում է Միլանին, աչպիսիս փորձում է ցույց տալ Իրաքի ժողովրդին, թե կառավարությունն ու հոգևոր իշխանությունը ապստամբությունների հարցում համերաշխ են:

### ՌԱՅՍԱԶԱՆԻ ԱՍԱՆՈՐՁԱ ԵԼՈՒՅԹԸ

Իրանի խորհրդարանի նախագահ Ռաֆիսանջանին մարտի 21-ին Նուրուզի առթիվ ռադիոյով արտասանած ելույթում նշեց, որ անցած տարին, ընդհանուր առմամբ, Իրանի համար հաջողություններով լի տարի էր: Իրանի իսլամական հեղափոխությունը, ավելացրել է նա, այլևս չի դիտվում որպես մի խումբ ելուզակների կողմից հովանավորվող երևույթ: Այժմ, ի հեճուկս Իրանի թշնամիների, իսլամական հեղափոխությունը շնորհիվ իր հաջողակ արտաքին քաղաքականության, կարողացել է չափավոր քաղաքական գիծ ունեցող մի գործընթացի համարավ վատակել: Իրան-Իրաքի պատերազմի դադարեցումը և մի շարք արտասահմանյան երկրների հետ դիվանագիտական հարաբերությունների վերականգնումը, ըստ Ռաֆիսանջանի, այդ քաղաքականու-

թյան պտուղներն են: Նախագահը նշեց նաև, որ միջազգային դրամատունը առաջին անգամ, 1979 թ. իսլամական հեղափոխությունից հետո, համաձայնվել է Իրանին վարկ հատկացնել:

Նախագահ Ռաֆիսանջանին խոստովանել է, որ եղել են նաև սխալներ, սակայն չի անդրադարձել այդ սխալներին: Իրանի ղեկավարը նշեց, որ ընդհանուր առմամբ հեղափոխության ոգին պահպանվել է: Նկատի ունենալով մաքսանեցությունն ու սպեկուլյացիան, Ռաֆիսանջանին գոհունակությամբ հայտնեց, որ երկրում հանցագործությունների չափերը զգալիորեն նվազել են, իշխանությունները թե՛ երկրի ներսում, թե՛ սահմանային գծերում կարողացել են ապահովել անվտանգությունը:

